

«Ամերիաբանկ» ՓԲԸ կողմից ֆիզիկական անձանց բանկային ծառայությունների մատուցման հիմնական պայմաններ

Ընդունվել է Բանկի Տնօրինության 04.02.2015թ. թիվ 02/03/15 որոշմամբ, ընթացիկ խմբագրությունը՝ 25.01.2024թ. թիվ 01/14/24 որոշմամբ և ուժի մեջ է ներքևում նշված ամսաթվից:

1. Ընդհանուր պայմաններ

- 1.1. «Ամերիաբանկ» ՓԲԸ կողմից ֆիզիկական անձանց բանկային ծառայությունների մատուցման հիմնական պայմանները (այսուհետ՝ Պայմաններ) սահմանում են Ամերիաբանկ ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) և ֆիզիկական անձի (այսուհետ՝ Հաճախորդ, իսկ երկուսը միասին՝ Կողմեր) միջև Բանկի կողմից բանկային ծառայությունների մատուցման հետ կապված փոխհարաբերությունների և իրականացվող գործառնությունների հիմնական պայմանները:
- 1.2. Պայմանների սույն գլուխը կիրառելի է Բանկի ստորև նշված բանկային գործիքների համար, որոնց կարգավորումը նաև նախատեսված է Պայմանների համապատասխան գլխով և/կամ Բանկի կողմից տվյալ գործիքի համար սահմանված առանձին պայմաններով և կանոններով (այսուհետ՝ Առանձին ծառայության պայմաններ).
 - 1.2.1. Բանկային հաշիվ,
 - 1.2.2. Հեռահար սպասարկման համակարգեր,
 - 1.2.3. Վճարային քարտ,
 - 1.2.4. Ավանդ,
 - 1.2.5. Պահատուփ:
- 1.3. Պայմանները հանդիսանում են հրապարակային առաջարկ (օֆերտա), որը համարվում է Հաճախորդի կողմից ընդունված (ակցեպտավորված).
 - 1.3.1. Բանկի սահմանած ձևանմուշով Հաճախորդի ստորագրած/վավերացրած համապատասխան հայտը (հայտ-պայմանագիրը) կամ հանձնարարականը Բանկ ներկայացվելու պահից, կամ
 - 1.3.2. համապատասխան դեպքերում՝ Պայմաններն ընդունելու մասին Հաճախորդի հաստատումը Բանկի համար ընդունելի և տվյալ ծառայության համար սահմանված եղանակով Բանկ ներկայացվելու պահից և/ կամ տվյալ ծառայությունից օգտվելու համար Հաճախորդի կողմից համապատասխան գործողություն կատարելու միջոցով:
- 1.4. Բանկի որոշակի ծառայության համար Բանկի սահմանած ձևանմուշով փաստաթղթի՝ Հաճախորդի կողմից ստորագրումը/վավերացումը կամ համապատասխան դեպքերում՝ Հաճախորդի կողմից ծառայությունից օգտվելու գործողության կատարումը փաստում է Հաճախորդի կողմից Պայմանների, Առանձին ծառայության պայմանների, «Բանկի սակագների ֆիզիկական անձ հաճախորդների համար» և Բանկի կողմից տվյալ ծառայության համար սահմանված առանձին սակագների (այսուհետ՝ երկուսը միասին՝ Սակագներ) ընդունումը:
- 1.5. Պայմանների ներքո Կողմերի միջև իրավահարաբերությունները ծագում են/ուժի մեջ են Հաճախորդի ակցեպտը Բանկի կողմից ստանալու և ընդունելու պահից, որը և այդ պահից, Պայմանների, Առանձին ծառայության պայմանների և Սակագների հետ միասին, համարվում է Կողմերի միջև կնքված պայմանագիր:
- 1.6. Կողմերի միջև իրավահարաբերությունները Պայմանների ներքո, սակայն վերջինից տարբերվող դրույթների մատով կարող են կարգավորվել առանձին պայմանագիր կամ համաձայնագիր կնքելու միջոցով, որը Կողմերի համաձայնությամբ կարող է կատարվել ծառայության տրամադրման և սպասարկման ցանկացած փուլում:

- 1.7. Հաճախորդների առանձին խմբերի համար Բանկը կարող է սահմանել սպասարկման առանձին պայմաններ և կանոններ, որոնք գործում են ի լրումն Պայմանների, եթե դրանցում այլ բան նախատեսված չէ:
- 1.8. Այն դեպքում, երբ Բանկի կողմից առանձին ծառայությունների մատուցման համար սահմանված են առանձին պայմաններ և (կամ) պայմանագրեր, դրանք գործում են ի լրումն Պայմանների:
- 1.9. Պայմանները գերակա են, և Պայմանների ներքո Բանկի կողմից հաստատված և հետագայում հաստատվող փաստաթղթերի տիպային ձևերը, Առանձին ծառայության պայմանները, Սակագները գործում են այնքանով, որքանով չեն հակասում Պայմաններին, եթե այդպիսի տիպային ձևերով, պայմաններով, սակագներով այլ բան նախատեսված չէ:
- 1.10. Պայմանները, Սակագները, Առանձին ծառայության պայմանները, այդ թվում՝ բանկային հաշիվների մնացորդների դիմաց հաշվարկվող տոկոսադրույքի չափը, ինչպես նաև Բանկի կողմից ծառայությունների մատուցման համար Հաճախորդից պահանջվող փաստաթղթերի ցանկը սահմանվում և կարող են միակողմանիորեն փոփոխվել Բանկի կողմից, հասանելի են Բանկի տարածքում և Բանկի ինտերնետային կայքում: Պայմաններում, Սակագներում, Առանձին ծառայության պայմաններում փոփոխությունների մասին Բանկը Հաճախորդին ծանուցում է դրանց ուժի մեջ մտնելուց ոչ ուշ, քան 7 (յոթ) աշխատանքային օր առաջ (կամ ավելի ուշ, եթե դա թույլատրվում է ՀՀ օրենսդրությամբ, սակայն ոչ ուշ, քան դրանց ուժի մեջ մտնելը), եթե ծանուցման ավելի երկար ժամկետ և/կամ ավելի խիստ պահանջ նախատեսված չէ ՀՀ օրենսդրությամբ՝ Բանկի տարածքում, ինտերնետային կայքում դրանք հասանելի դարձնելու, նաև հրապարակելու միջոցով, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև Հաճախորդի կողմից ընտրված հաղորդակցման նախընտրելի այլ եղանակով: Եթե մինչև փոփոխությունների ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետը Հաճախորդը գրավոր չի տեղեկացնում Բանկին՝ Պայմանների ներքո Կողմերի միջև իրավահարաբերությունները դադարեցնելու իր ցանկության մասին, այդ փոփոխությունները համարվում են ընդունված (ակցեպտավորված) Հաճախորդի կողմից:
- 1.11. Բանկի կողմից Հաճախորդին ծառայություններ կարող են մատուցվել ինչպես Հաճախորդի և Բանկի առերես հաղորդակցմամբ, այնպես էլ հեռահար եղանակով: Յուրաքանչյուր հեռահար սպասարկման համակարգի միջոցով հասանելի ծառայությունների/գործառնությունների և գործողությունների տեսակները սահմանվում են Պայմաններով և/կամ դրանց կատարումը տվյալ հեռահար սպասարկման համակարգում հասանելի դարձնելու միջոցով: Հաճախորդի հեռահար սպասարկման պայմանները և կանոնները սահմանվում են Պայմաններում, իսկ Պայմաններում չնկարագրված, այդ թվում՝ Բանկի կողմից հրապարակայնորեն հասանելի դարձրած հեռահար ծառայությունների պայմանները Բանկը սահմանում և հրապարակում է առանձին՝ այդ ծառայությունների համար նախատեսված համակարգում:
- 1.12. Բանկի մասնաճյուղերի և Կոնտակտ կենտրոնի կողմից Հաճախորդը սպասարկվում է գործառնական օրվա ընթացքում, որը Բանկը սահմանում է ինքնուրույն: Յուրաքանչյուր մասնաճյուղի և Կոնտակտ կենտրոնի գործառնական օրերի և ժամերի վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի է Բանկի պաշտոնական ինտերնետային կայքում: Պայմանների իմաստով գործառնական օր է համարվում Հաճախորդի սպասարկման համար Բանկի մասնաճյուղերի և Կոնտակտ կենտրոնի համար սահմանված օրերն ու ժամերը, իսկ աշխատանքային օր է համարվում հնգօրյա աշխատանքային շաբաթվա ռեժիմում՝ ժամը 9:00-18:00:
- 1.13. Հաճախորդի համար Բանկում սահմանված կարգով հաստատվում է Հաճախորդի հաշվով գործարք կատարելու իրավունք ունեցող ներկայացուցչի (ներկայացուցիչների) ստորագրության (ստորագրությունների) նմուշ(ներ): Ընդ որում, հեռահար եղանակով բացված Հաճախորդի ստորագրության նմուշը հաստատվում է առաջին այցով Բանկ:
- 1.14. Հաճախորդը վճարում է Բանկին վերջինիս կողմից մատուցվող ծառայությունների դիմաց միջնորդավճարներ և ապահովում է հաշվի նվազագույն մնացորդ՝ Սակագներով նախատեսված դեպքերում և սահմանված չափերով:
- 1.15. Միջնորդավճարները գանձվում են ՀՀ դրամով, բացառությամբ ոչ ռեզիդենտ անձանցից գանձվող միջնորդավճարների, որոնք ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում կարող են գանձվել նաև

արտարժույթով: Արտարժույթով գումարի նկատմամբ տոկոսներով արտահայտված միջնորդավճարները գանձվում են ՀՀ դրամով՝ հիմք ընդունելով գանձման պահի դրությամբ Բանկի սահմանած տվյալ արտարժույթի առքի փոխարժեքը: Վճարային քարտերի սպասարկման ընթացքում ՀՀ դրամով արտահայտված վճարների մուտքագրումները և գանձումները իրականացվում են ՀՀ ԿԲ կողմից հայտարարված արժույթային շուկայում ձևավորված միջին փոխարժեքով:

- 1.16. Բանկում Հաճախորդի հաշիվներին ՀՀ դրամով բավարար միջոցներ չլինելու դեպքում Բանկն իրավունք ունի միջնորդավճարի գումարը կամ դրա մի մասը գանձել Հաճախորդի արտարժույթային միջոցներից՝ փոխարկելով արտարժույթը ՀՀ դրամի՝ հիմք ընդունելով գանձման պահի դրությամբ Բանկի սահմանած տվյալ արտարժույթի առքի փոխարժեքը:
- 1.17. Բանկն իրավունք ունի առանց Հաճախորդին նախապես տեղեկացնելու ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան այլ բանկերին, վարկային կազմակերպություններին, վարկային բյուրոներին, ինչպես նաև Ավանդների հատուցման երաշխավորման հիմնադրամին՝ վերջիններին պահանջով կամ իր նախաձեռնությամբ տրամադրել Հաճախորդի և նրա հաշիվների, ինչպես նաև վարկային պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվություն:
- 1.18. Բանկն իրավունք ունի առանց Հաճախորդին նախապես տեղեկացնելու ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան՝ ՀՀ հարկային մարմնին տրամադրել հարկային մարմնում հաշվառված հարկ վճարողների համար Բանկում հաշիվների բացման, ինչպես նաև փակման մասին տեղեկատվություն:
- 1.19. Բանկը կարող է օտարերկրյա օրենսդրության պահանջներին համապատասխան՝ օտարերկրյա օրենսդրության ներքո ընկնող Հաճախորդի վերաբերյալ տեղեկատվություն տրամադրել օտարերկրյա իրավասու մարմիններին:
- 1.20. Սույն կետի և ենթակետերի դրույթները վերաբերում են միայն «Օտարերկրյա հաշիվների հարկման համապատասխանության մասին» (Foreign Account Tax Compliance Act, այսուհետ՝ FATCA) ԱՄՆ օրենքի իմաստով «ԱՄՆ անձանց»:
 - 1.20.1. ԱՄՆ FATCA օրենքով նախատեսված դեպքերում և կարգով Բանկն իրավունք ունի Հաճախորդի և վերջինիս հաշիվների և Բանկին հայտնի եկամուտների մասին տեղեկատվություն տրամադրել ԱՄՆ Ներքին եկամուտների ծառայությանը (Internal Revenue Service, IRS)՝ վերհիշյալ օրենքի հիման վրա սահմանված Հաշվետվական ձևերով:
 - 1.20.2. FATCA օրենքի դրույթներին, ինչպես նաև ԱՄՆ քաղաքացիություն ունեցող անձանց, ԱՄՆ ռեզիդենտների, ԱՄՆ կացության կարգավիճակ ունեցող անձանց մասին հաշվետվություն ներկայացնելու, որոշ եկամուտներից հարկային պահումների ենթարկվելու և իրեն՝ որպես ԱՄՆ անձի վերաբերող ԱՄՆ օրենսդրության պահանջներին ծանոթ լինելու պարտականությունը կրում է Հաճախորդը:
 - 1.20.3. Հաճախորդը պարտավորվում է որևէ կերպ չվիճարկել ի կատարումն FATCA-ի Բանկի իրականացրած որևէ գործողություն և չներկայացնել որևէ պահանջ նշված օրենքի շրջանակներում Բանկի կատարած գործողությունների առնչությամբ:
 - 1.20.4. Ապագայում «ԱՄՆ անձի» կարգավիճակ ձեռք բերելիս Հաճախորդը պարտավոր է այդ մասին Բանկին գրավոր ծանուցել (տեղեկացնել)՝ առավելագույնը 30-օրյա ժամկետում:
- 1.21. Բանկը Հաճախորդի հետ հաղորդակցվում է, այդ թվում՝ ուղարկում է հաղորդագրություններ, Բանկի կողմից մատուցվող բանկային ծառայությունների հետ կապված փաստաթղթեր, նյութեր և պարագաներ՝ Հաճախորդի հետ համաձայնեցված եղանակով և հաղորդակցման տվյալներով (այսուհետ՝ Հաճախորդի հաղորդակցման նախընտրություններ):
 - 1.21.1. Հաճախորդի հաղորդակցման նախընտրություններին համապատասխան՝ փոստային կամ էլեկտրոնային կապի, ինչպես նաև բջջային հեռախոսակապի կարճ հաղորդագրության (SMS), տեխնիկական հնարավորության դեպքում՝ կիրառելի այլ կապի միջոցով ծանուցման դեպքում Հաճախորդը համարվում է պատշաճ ծանուցված՝ վերջինիս հասցեագրված Բանկի հաղորդագրությունը

Հաճախորդի կողմից Բանկին տրամադրված և Հաճախորդի հետ համաձայնեցված փոստային հասցեին, էլեկտրոնային փոստի հասցեին կամ բջջային հեռախոսահամարին, տեխնիկական հնարավորության դեպքում՝ կապի այլ միջոցով Բանկի կողմից ուղարկվելու դեպքում՝ անկախ այն հանգամանքից, թե Հաճախորդը փաստացի երբ է ստանում այն: ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով Բանկի կողմից Հաճախորդի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին¹ ծանուցում ուղարկվելու դեպքում Հաճախորդը համարվում է պատշաճ ծանուցված՝ այդ ծանուցումը Հաճախորդի կողմից կարդալու մասին էլեկտրոնային հավաստման ամսաթվից, կամ ծանուցումն ստանալուն հաջորդող 5-րդ (հինգերորդ) օրվանից, եթե բացակայում է այն կարդալու մասին էլեկտրոնային հավաստումը:

1.21.2. Բանկը կարող է Հաճախորդի կոնտակտային տվյալները կիրառել այդ թվում Հաճախորդի հաղորդակցման նախընտրություններում ուղղակիորեն չնշված՝ Բանկի կողմից կամ Բանկի միջնորդությամբ Հաճախորդին տրամադրվող ծառայությունների հետ կապված տեղեկատվության տրամադրման համար:

1.21.3. Անկախ Հաճախորդի հաղորդակցման նախընտրություններից՝ տեղեկատվությունը Հաճախորդին կամ վերջինիս իրավասու ներկայացուցչին առձեռն հանձնվելու պարագայում Հաճախորդը համարվում է պատշաճ ծանուցված՝ հրաժարվելով Կոդերի միջև համաձայնեցված որևէ այլ եղանակով լրացուցիչ ծանուցվելուց և Բանկին նշվածի հետ կապված որևէ պահանջ ներկայացնելուց, եթե այլ բան նախատեսված չէ ՀՀ օրենսդրությամբ:

1.21.4. ՀՀ օրենսդրության համաձայն, ներառյալ՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված հաճախականությամբ, Հաճախորդի հաղորդակցման նախընտրությունները Հաճախորդի կողմից միակողմանի նախաձեռնությամբ կարող են փոփոխվել՝ Բանկի համար ընդունելի կապի միջոցներով Բանկ ներկայացված՝ այդ փոփոխությունների վերաբերյալ Հաճախորդի գրավոր դիմումի հիման վրա: Նշված փոփոխություններն ուժի մեջ են մտնում ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում, այնուամենայնիվ, Բանկն իրավունք ունի փոփոխված հաղորդակցման նախընտրությունները կիրառել նաև մինչև այդ ժամկետը, այն է՝ Հաճախորդի գրավոր դիմումը ստանալուց հետո մինչև 30-օրյա ժամկետը լրանալն իրականացվող հաղորդակցման նկատմամբ: Հաճախորդի հաղորդակցման նախընտրություններում փոփոխությունները Հաճախորդի կողմից ՀՀ օրենսդրությամբ սահմանվածից ավելի հաճախ պահանջվելու դեպքում դրանք կատարվում են Բանկի համաձայնությամբ՝ Բանկի ներքին իրավական ակտերով և Սակագներով սահմանված պայմանների պահպանմամբ:

1.22. Բանկային ծառայությունների տրամադրման շրջանակներում Բանկի և Հաճախորդի միջև պայմանագրերը, Բանկի հրապարակային առաջարկներով և/կամ Առանձին պայմաններով սահմանված վավերապայմաններով ու կարգով, կարող են կնքվել էլեկտրոնային եղանակով՝ համապատասխան տեսակի պայմանագրերի կնքման հնարավորություն նախատեսող Բանկի առցանց հարթակների (ներառյալ՝ Բանկի պաշտոնական ինտերնետային կայքի) միջոցով, ընդ որում՝ նման եղանակով պայմանագրերը համարվում է Հաճախորդի կողմից կնքված, եթե այն կնքվել է Հաճախորդի կողմից Բանկին տրամադրված Հաճախորդի անձնական տվյալների և կապի միջոցների (էլեկտրոնային փոստի հասցեի, հեռախոսահամարի և այլն) կիրառմամբ/ մուտքագրմամբ: Բանկը կարող է կիրառել Հաճախորդի նույնականացման հավելյալ միջոցներ: Սույն կետով սահմանված պահանջների պահպանմամբ էլեկտրոնային եղանակով Հաճախորդի և Բանկի միջև կնքված պայմանագրերն ունի այն նույն իրավական ուժը, ինչ ձեռագրով ստորագրվածը:

1.23. Բանկի կողմից առաջարկվող կամ մատուցվող որոշակի ծառայությունների, արշավների, ակցիաների և այլ հարաբերությունների շրջանակներում Հաճախորդի կողմից Բանկին տրվող համաձայնությունները (ներառյալ՝ «ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» ՓԲԸ-ից, ՀՀ ԿԲ վարկային ռեգիստրից, «Նորք» սոցիալական ծառայությունների

¹ Ֆիզիկական անձին ՀՀ կառավարության սահմանած կարգով նույնականացման քարտի հետ տրված էլեկտրոնային փոստի հասցե:

տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամից, «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» («ԷԿԵՆԳ») ՓԲԸ-ից և տվյալների շտեմարաններ վարող տեղեկատվական այլ բազաներից տեղեկություններ ստանալու և փոխանակելու վերաբերյալ համաձայնությունները), դիմումները, հայտերը, գրությունները կամ այլ փաստաթղթերը Բանկը կարող է ընդունել նույնականացման հնարավորություն ապահովող այնպիսի էլեկտրոնային հաղորդակցության միջոցներով հաղորդագրություններ (փաստաթղթեր) փոխանակելու միջոցով, ինչպիսիք են՝ Հաճախորդի կողմից Բանկին տրամադրված էլեկտրոնային փոստը, Ինտերնետ/մոբայլ-բանկինգ համակարգերը և, որտեղ կիրառելի է, համապատասխան ծառայության շրջանակներում Բանկի հրապարակային առաջարկներով և/կամ Առանձին պայմաններով սահմանված էլեկտրոնային հաղորդակցության այլ միջոցները: Ընդ որում, Բանկը կարող է կիրառել Հաճախորդի նույնականացման հավելյալ միջոցներ: Սույն կետով սահմանված պահանջների պահպանմամբ էլեկտրոնային հաղորդակցության միջոցներով Հաճախորդի կողմից տրված համաձայնությունը, դիմումը, հայտը կամ այլ փաստաթուղթ ունի այն նույն իրավական ուժը, ինչ ձեռագրով ստորագրվածը:

- 1.24. Հաճախորդը պարտավոր է պատշաճ կերպով պահպանել իր անձնական տվյալները և հաղորդակցման կապի միջոցները/ դրանց նկատմամբ հասանելիության տվյալները, որոնց օգտագործմամբ Պայմանների համաձայն հնարավոր է էլեկտրոնային եղանակներով Բանկի հետ կնքել պայմանագրեր, փոխանակել հաղորդագրություններ (փաստաթղթեր), այդ թվում՝ ստանալ ծանուցումներ: Հաճախորդը կրում է իր անձնական տվյալները և/կամ հաղորդակցման կապի միջոցները/ դրանց նկատմամբ հասանելիության տվյալները երրորդ անձանց հասանելի դառնալու, ինչպես նաև իր հաղորդակցման միջոցներին Բանկի կողմից ուղարկված ծանուցումները չկարդալու և/կամ երրորդ անձանց հասանելի դառնալու հետ կապված բոլոր հետևանքների ռիսկը, ինչպես նաև պարտավորվում է Բանկի պահանջով հատուցել դրա հետևանքով Բանկին պատճառված վնասները:
- 1.25. Բանկը պատասխանատվություն չի կրում Հաճախորդի վերաբերյալ բանկային գաղտնիքի հնարավոր բացահայտման և դրա հետ կապված բոլոր անբարենպաստ հետևանքների համար, եթե Հաճախորդը նախընտրում է սպասարկվել երրորդ անձի ներկայությամբ:
- 1.26. Հաճախորդը թույլատրում է Բանկին օգտագործել Հաճախորդի կոնտակտային տվյալները (անուն, ազգանունը, հասցեն և Բանկին տրամադրված ցանկացած հաղորդակցման տվյալները), ինչպես նաև իր հայեցողությամբ և առանց Հաճախորդին նախապես տեղեկացնելու՝ Բանկի հետ պայմանագրային հարաբերությունների մեջ գտնվող ընկերություններին տրամադրել այդ տվյալները՝ Բանկի կողմից ծառայությունների մատուցման, Հաճախորդին ծառայություններ առաջարկելու, մատուցվող ծառայությունները բարելավելու, ինչպես նաև Բանկի կողմից մատուցվող ծառայություններին առնչվող հարցումներ իրականացնելու նպատակով:
- 1.27. ՀՀ օրենսդրությամբ նախատեսված իրավական հիմքերի առկայության դեպքում Հաճախորդի՝ Բանկին տրամադրված անձնական տվյալների ուղղման, ոչնչացման և/կամ մշակման դադարեցման վերաբերյալ Հաճախորդի գրավոր դիմումը Բանկի կողմից դիտարկվում և ընթացք է տրվում ՀՀ օրենսդրությամբ և/կամ Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված կարգով և ժամկետներում:
- 1.28. Բանկի ծառայություն(ներ)ից օգտվող բոլոր կամ որոշակի խումբ Հաճախորդների համար կարող են հասանելի դարձվել Բանկի և/կամ Բանկի հետ համագործակցող կազմակերպությունների կողմից տրամադրվող լրացուցիչ հնարավորություններ, զեղչեր կամ արտոնություններ (այսուհետ նաև՝ Հատուկ պայմաններ): Նման դեպքերում տվյալ ծառայությունից օգտվելով և իր անձնական տվյալները Բանկին տրամադրելով՝ Հաճախորդը համաձայնություն է տալիս, որ տրամադրված անձնական տվյալները մշակվեն ինչպես Բանկի կողմից, այնպես էլ, Հաճախորդի բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների հետ միասին, Բանկի կողմից փոխանցվեն այդ ծառայությունը Հաճախորդին մատուցելու/ Հատուկ պայմանները տրամադրելու նպատակով Բանկի հետ համագործակցող կազմակերպություններին և մշակվեն վերջիններիս կողմից՝ բացառապես տվյալ ծառայության մատուցումը/ Հատուկ պայմանների տրամադրումն ու սպասարկումն ապահովելու նպատակով և սահմաններում: Հատուկ պայմանները և/կամ դրանց տեղեկանալու աղբյուրները, համագործակցող

կազմակերպությունների անվանումները, ինչպես նաև Հատուկ պայմանների տրամադրման և սպասարկման համար համագործակցող կազմակերպություններին փոխանցման և մշակման ենթակա տվյալների տեսակները սահմանվում են Սակագներով և/կամ Առանձին ծառայության պայմաններով կամ այլ փաստաթղթով, որը հրապարակվում է Բանկի կայքում՝ տվյալ ծառայության Սակագների հետ միասին: Սույն կետի համաձայն տրվող համաձայնությունը գործում է համապատասխան ծառայությունից օգտվելու ողջ ժամանակահատվածում՝ քանի դեռ այդ ծառայությունը և/կամ Հատուկ պայմանները գործում են, եթե Հաճախորդն ավելի վաղ գրավոր ձևով հետ չի կանչել իր համաձայնությունը: Հաճախորդի կողմից տրված համաձայնությունը հետ կանչվելու դեպքում համաձայնության հիման վրա մշակվող և փոխանցվող անձնական տվյալների հետ ուղղակիորեն կապված Հատուկ պայմանների տրամադրումը և/կամ ծառայության մատուցումը դադարեցվում է կամ կասեցվում է:

- 1.29. Հաճախորդն իր անձնական տվյալներ պարունակող փաստաթղթերը Բանկ ներկայացնելով՝ համաձայնում է, որ Բանկը հայտ-պայմանագրեր կազմելու և կնքելու նպատակով հարցում կատարի «Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամին (և/կամ ֆիզիկական անձանց անձնական տվյալները տիրապետող այլ անձի/ սուբյեկտի) և ստանա հասանելի տեղեկությունները՝ համապատասխան անձնական տվյալները գեներացնելով հայտում/հայտ-պայմանագրում: Ի լրումն սույն կետում նշված պայմանի՝ մինչ համապատասխան հայտի (հայտ-պայմանագրի) կնքումը, Հաճախորդի սույն կետով տրված համաձայնությունը հաստատվում է գրավոր եղանակով, իսկ հայտի (հայտ-պայմանագրի) կնքման դեպքում նրա համաձայնությունը համարվում է տրված Պայմաններին միանալու ուժով:
- 1.30. Հաճախորդն իր անձնական տվյալներ պարունակող փաստաթղթերը Բանկ ներկայացնելով՝ համաձայնում է, որ Բանկը, հայտ-պայմանագրեր կազմելու, Հաճախորդի վարկավորման հնարավորությունները Բանկի կամ Հաճախորդի նախաձեռնությամբ դիտարկելու և Բանկի կամ Հաճախորդի նախաձեռնությամբ վարկավորման առաջարկներ ներկայացնելու նպատակներից ցանկացածից կամ միաժամանակ նշված նպատակներից մի քանիսից կամ բոլորից ելնելով, հարցում կատարի «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ին (և/կամ ֆիզիկական անձանց անձնական տվյալները տիրապետող այլ անձի/ սուբյեկտի) և ստանա Բանկի պաշտոնական կայքէջում հրապարակված «Բանկի կողմից ստացվող անձնական տվյալների նկարագրություն» փաստաթղթով² սահմանված/դասակարգված անձնական տվյալները: Ի լրումն սույն կետում նշված պայմանի, սույն կետով տրված համաձայնությունը հաստատվում է գրավոր եղանակով համաձայնություն ստորագրելու, իսկ հայտի (հայտ-պայմանագրի) կնքման դեպքում՝ Պայմաններին միանալու ուժով: Ընդ որում, սույն կետով սահմանված համաձայնությունը գործում է միայն այն Պայմաններում ինկորպորացնելուց հետո նշված համաձայնությունը գրավոր հաստատած և/կամ Բանկի հետ Պայմանների 1.2 կետով սահմանված բանկային գործիքների գծով Պայմաններին միանալով գործարար հարաբերություն հաստատած Հաճախորդների նկատմամբ:
- 1.31. Հաճախորդը համաձայնում է, որ Բանկը, անկախ Հաճախորդի կողմից վարկային պարտավորություններ ստանձնելու/ունենալու հանգամանքից, ձևավորի/ստանա բանկային նույնականացուցիչ (Bank ID), որի համար Հաճախորդի մասին տեղեկությունները մուտքագրի ՀՀ ԿԲ Վարկային ռեգիստրի հաճախորդների միասնական շտեմարան համակարգ:
- 1.32. Հաճախորդը համաձայնում և հանձնարարում է, որ Բանկ դիմած երրորդ անձին, որը տիրապետում է Հաճախորդի վարկային պարտավորությունների մասին Բանկի համար ընդունելի չափով բավարար տվյալների, Բանկը տրամադրի հնարավորություն Հաճախորդի վարկային պարտավորությունների մարումն իրականացնելու համար:
- 1.33. Բանկն իրավունք ունի օգտագործել Հաճախորդի էլեկտրոնային փոստի հասցեն, բջջային հեռախոսահամարը և այլ հաղորդակցման տվյալները՝ Հաճախորդին Բանկի կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ

² «Բանկի կողմից ստացվող անձնական տվյալների նկարագրություն» (11RBD/12CIB LI 72-01-02), ընդունվել է Բանկի Տնօրինության 13.01.2021թ. թիվ 01/01/21 որոշմամբ: Հղումը՝ <https://ameriabank.am/useful-links>

տեղեկատվական, գովազդային բնույթի հաղորդագրություններ ուղարկելու նպատակով: Տեղեկատվական բնույթի հաղորդագրությունը ներառում է հաշիվների քաղվածքները, Բանկի ծառայությունների պայմանների, Կողմերի միջև հաղորդակցման կարգի, Կողմերի իրավունքների և պարտականությունների սահմանման, փոփոխման կամ դադարեցման, Բանկի ծառայությունների և տարեկան տոկոսային եկամտաբերության վրա ազդեցություն ունեցող օրենքների, նորմատիվ իրավական ակտերի, Բանկի ներքին իրավական ակտերի փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպես նաև Հաճախորդի պարտավորությունների, դրանց առաջացման հիմքերի, մարումների վերաբերյալ և պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար Բանկի կողմից կիրառված (կիրառվող) պատասխանատվության միջոցների, դրանց կիրառման կարգի վերաբերյալ տեղեկատվությունը:

- 1.34. Հաճախորդը պարտավորվում է Բանկի համար ընդունելի կապի միջոցներով անհապաղ տեղեկացնել Բանկին իր հասցեի, ռեզիդենտության կարգավիճակի, Կողմերի միջև համաձայնեցված հաղորդակցման եղանակներով հաղորդակցվելու համար անհրաժեշտ՝ Հաճախորդի որևէ սվյալի, ինչպես նաև Բանկին ներկայացված տեղեկություններում և փաստաթղթերում ցանկացած այլ փոփոխությունների մասին: Հաճախորդի կողմից նման փոփոխությունների վերաբերյալ Բանկին տեղեկություններ չտրամադրելու դեպքում Բանկը պատասխանատվություն չի կրում Բանկում առկա տեղեկությունների կամ փաստաթղթերի հիման վրա Հաճախորդի բանկային հաշվով կատարված գործառնությունների, ինչպես նաև Բանկի ծանուցումները և Հաճախորդին ուղղված տեղեկատվությունը Հաճախորդի կողմից չստացվելու կամ երրորդ անձանց հասանելի դառնալու հետևանքով Հաճախորդի կրած վնասների համար:
- 1.35. Հաճախորդը համաձայն է, որ Կողմերի միջև Բանկի տարածքում կամ իրական ժամանակի ռեժիմում հեռահար ցանկացած կապի միջոցի օգտագործմամբ զրույցը, անվտանգության և սպասարկման որակի բարելավման նկատառումներից ելնելով, կարող է ամբողջությամբ ձայնագրվել, և այդ ձայնագրությունը կարող է ունենալ ապացուցողական նշանակություն և օգտագործվել այդ թվում՝ Բանկի կողմից իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար:
- 1.36. Հաճախորդը համաձայնում է, որ Բանկը Հաճախորդի վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները տրամադրի ՀՀ օրենսդրությամբ սահմանված անձանց, դեպքերում և կարգով, ինչպես նաև.
 - 1.36.1. քրեական հետապնդում իրականացնող մարմիններին՝ զեղծարարության, խարդախության կամ հանցագործության կամ դրանց վերաբերյալ կասկածի կամ վտանգի առկայության դեպքերում,
 - 1.36.2. ապահովագրական ընկերություններին, վերաապահովագրողներին, ապահովագրական հատուցումների տրամադրման գործընթացում փորձաքննություն իրականացնող մասնագիտացված անձանց՝ Բանկի իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու անհրաժեշտության դեպքերում և սահմաններում,
 - 1.36.3. ՀՀ հարկային մարմիններին՝ Բանկի կողմից մատուցվող ծառայությունների և/կամ որևէ այլ հիմքով Կողմերի միջև ծագած ցանկացած իրավահարաբերությունների շրջանակներում Հաճախորդի նկատմամբ առաջացած Բանկի որևէ դրամական պահանջի (ակտիվի) դուրսգրման առնչությամբ՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և սահմաններում:

Սույն կետով սահմանված համաձայնությունը գործում է սույն կետը Պայմաններում ներառվելուց հետո Հաճախորդի կողմից իր համաձայնությունը գրավոր հաստատելու, այդ թվում նաև՝ Պայմաններին նախատեսված որևէ ընդունելի եղանակով միանալու կամ համաձայնելու հիմքով և այդուհետ շարունակում է ուժի մեջ մնալ և գործել անժամկետ՝ անկախ Պայմանների ներքո կողմերի հարաբերությունների դադարման փաստից:

- 1.37. Հաճախորդը տեղեկացված է, որ էլեկտրոնային եղանակով ուղարկված ցանկացած հաղորդագրություն կարող է ներխուժման և միջամտության ենթարկվել երրորդ անձանց կողմից: Հաճախորդը գիտակցում է նաև, որ իր կողմից նշված փոստային հասցեով իրեն ուղարկվող տեղեկատվությունը կարող է հասանելի դառնալ երրորդ անձանց՝ Բանկի կամքից անկախ պատճառներով: Այդ կապակցությամբ Հաճախորդը հաստատում է, որ Բանկը

որևէ պատասխանատվություն չի կրում Հաճախորդի կրած այն վնասների համար, որոնք կարող են առաջանալ վերը նշված պատճառներով տեղեկատվությունն ուշացումով ստանալու կամ այդ տեղեկատվությունը Բանկի կամքից անկախ պատճառներով կամ ոչ Բանկի մեղքով երրորդ անձանց հասանելի դառնալու հետևանքով:

- 1.38. Հաճախորդը պատասխանատու է Բանկի կրած բոլոր այն ծախսերի, կորուստների և վնասների համար, որոնք առաջացել են Պայմաններով, Առանձին ծառայության պայմաններով սահմանված՝ Հաճախորդի պարտավորությունները վերջինիս կողմից չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հետևանքով:
- 1.39. Բանկը պատասխանատվություն չի կրում որևէ անձի կողմից կրած ուղղակի կամ անուղղակի ծախսերի և վնասների համար (ներառյալ սպասվելիք եկամտի կամ տոկոսների կորուստը), եթե այդպիսիք ամբողջությամբ կամ մասամբ առաջացել են Բանկի կողմից փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման հետ կապված գործողություններ կատարելու հետևանքով, ինչպես նաև ի կատարումն ՀՀ օրենսդրության այլ պահանջների:
- 1.40. Բանկը պատասխանատու չէ պետական մարմինների գործողությունների կամ անհաղթահարելի ուժի, այդ թվում՝ սարքավորումների անսարքության կամ էլեկտրաէներգիայի մատակարարման ընդհատումների կամ խափանման հետևանքով առաջացած Հաճախորդի վնասների, կորուստների կամ ուշացման դեպքերի համար: Բանկը պատասխանատվություն չի կրում Հաճախորդին տրամադրման ենթակա տեղեկատվությունը փոստային առաքման ծառայության կամ էլեկտրոնային հաղորդակցության համակարգերի խափանումների պատճառով Հաճախորդի կողմից ուշ ստանալու արդյունքում Հաճախորդի համար վրա հասնող որևէ հետևանքի համար:
- 1.41. Հաճախորդի մահվան, անգործունակության, անվճարունակության կամ սնանկ ճանաչվելու դեպքերում Բանկը պատասխանատվություն չի կրում բանկային գործառնությունների կամ ծառայությունների տրամադրման համար, քանի դեռ չի ստացել այդպիսի փաստերի մասին պատշաճ ծանուցում, այդ թվում՝ բավարար փաստաթղթային ապացույցներ: Պատշաճ ծանուցում ստանալու դեպքում այդ ծանուցման ստացմանը հաջորդող աշխատանքային օրվանից մինչև իրավահաջորդի կամ այլ օրինական ներկայացուցչի կողմից գործառնություններ կատարելու համար պատշաճ լիազորությունների ձեռքբերումը և ձևակերպումը, Բանկը կասեցնում է բանկային գործառնությունների և ծառայությունների տրամադրումը, ընդ որում՝ հաճախորդի մահվան դեպքում տուժանքների հաշվարկը կասեցվում է, իսկ տոկոսների հավելագրումը չի դադարում: Բանկն իրավունք ունի կասեցնել բանկային գործառնությունների և ծառայությունների տրամադրումը նաև այն դեպքում, եթե սույն կետում նշված փաստերի մասին տեղեկատվություն է ստացել այլ՝ Բանկի կողմից որպես հավաստի գնահատված աղբյուրից:
- 1.42. Ստորև նշված դեպքերում Բանկն իրավասու է մերժել (կասեցնել) Հաճախորդի գործարքի կատարումը/ Հաճախորդին ծառայության տրամադրումը, մերժել Հաճախորդի հետ իրավահարաբերությունների հաստատումը, դադարեցնել Հաճախորդի հետ ձևավորված իրավահարաբերությունները կամ միակողմանիորեն՝ Բանկի կողմից հաստատված ներքին իրավական ակտերով սահմանված կարգով (այդ թվում՝ տվյալ պահին գործող Սակագներով) դադարեցնել Հաճախորդին ծառայության տրամադրումը, ներառյալ՝ փակել Հաճախորդի հաշիվները, կամ մինչև Հաճախորդի կողմից համապատասխան փաստաթղթերի համալրումը կամ պահանջների կատարումը կամ Բանկի կողմից Հաճախորդի պատշաճ ուսումնասիրության գործընթացի ավարտը՝ ժամանակավորապես սահմանափակել այդ հաշիվներով գործառնությունները.
 - 1.42.1. «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ օրենսդրության այլ պահանջներին և/կամ Բանկի ներքին իրավական ակտերի պահանջներին համապատասխան,
 - 1.42.2. Բանկի օրինական պահանջները Հաճախորդի կողմից չկատարելու, այդ թվում Բանկի նկատմամբ պարտավորությունները ժամանակին չվճարելու, Պայմանների խախտման, Բանկի կողմից պահանջվող տեղեկատվությունը կամ փաստաթղթերը չտրամադրելու կամ Բանկի կողմից սահմանված տիպային

ձևից տարբերվող (նաև բովանդակության առումով) ցանկացած այլ ձևի փաստաթղթով ներկայացնելու դեպքում,

1.42.3. Պայմաններով, Սակագներով, Առանձին ծառայության պայմաններով նախատեսված դեպքերում:

Ընդ որում, Բանկի՝ սույն կետում նշված գործողությունների արդյունքում Հաճախորդի կրած վնասների համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

- 1.43. ՀՀ օրենսդրության պահանջների, ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի բանաձևերի, միջազգային իրավունքի նորմերի, միջազգային և օտարերկրյա պատժամիջոցների հիման վրա, Բանկի միակողմանի ստանձնած պարտավորությունների արդյունքում, Բանկի թղթակից բանկերի պահանջով կամ Բանկի իրավասու մարմնի որոշմամբ՝ Բանկը կարող է սահմանափակումներ կամ արգելքներ սահմանել և կիրառել որոշակի երկրի քաղաքացիություն (գրանցում) կամ ռեզիդենտություն ունեցող և/կամ առանձին խմբի դասվող անձանց նկատմամբ: Նման սահմանափակումների արդյունքում կարող են ինչպես արգելվել հաշիվների սպասարկումն ու Հաճախորդի հետ համագործակցությունն ընդհանրապես, այնպես էլ կարող են կիրառվել առանձին ծառայությունների գծով սահմանափակումներ (օրինակ՝ միջազգային վճարային քարտերի տրամադրման/սպասարկման արգելք, արտարժույթային հաշիվներով միջազգային փոխանցումների կատարման և/կամ ստացման արգելք):
- 1.44. Հաճախորդը կարող է միակողմանիորեն լուծել Բանկի հետ կնքված պայմանագիրը (այդ թվում՝ փակել Բանկում իր հաշիվները)՝ այդ մասին նախապես գրավոր ծանուցելով Բանկին և մարելով տվյալ պայմանագրի հետ կապված՝ Բանկի նկատմամբ ունեցած պարտավորություններն ամբողջությամբ:
- 1.45. Բանկը կարող է, առանց Հաճախորդին նախապես ծանուցելու կամ հիմնավորելու, կասեցնել կամ դադարեցնել բանկային ծառայությունների մատուցման հետ կապված գործառնությունները՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգի և պայմանների պահպանմամբ:
- 1.46. Տասը միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը կամ դրան համարժեք արտարժույթով գումարը չգերազանցող գույքային պահանջի դեպքում, ինչպես նաև ոչ գույքային պահանջի դեպքում Կողմերի միջև ծագած վեճերն ու տարաձայնությունները կարող են լուծվել Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի միջոցով: Կողմերի միջև ծագած վեճերի լուծման բացատրական ամփոփագիրը հասանելի է Բանկի տարածքում և Բանկի ինտերնետային կայքում:
- 1.47. Բանկի և Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի միջև կնքված պայմանագրի համաձայն Բանկը հրաժարվում է Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները դատական կարգով վիճարկելու իրավունքից ոչ գույքային պահանջների մասով, ինչպես նաև այն գույքային պահանջների մասով, որոնց չափը չի գերազանցում 300,000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամը:
- 1.48. Պայմաններով չկարգավորված իրավահարաբերությունները կարգավորվում են Սակագներով, Առանձին ծառայության պայմաններով, Բանկի և Հաճախորդի միջև պայմանագրային հարաբերություններ սահմանող փաստաթղթերով և ՀՀ օրենսդրությամբ, իսկ ՀՀ օրենսդրությամբ կարգավորված չլինելու դեպքում՝ գործարար շրջանառության սովորույթներով:
- 1.49. Բանկի և Հաճախորդի միջև ծագած վեճերն ու տարաձայնությունները լուծվում են դատական կարգով՝ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի կողմից, եթե այլ բան սահմանված չէ Կողմերի համաձայնությամբ և/կամ ՀՀ օրենսդրության իմպերատիվ նորմերի պահանջներով:
- 1.50. Պայմանների հայերեն տարբերակը նախապատվություն ունի այլ լեզուներով տարբերակների նկատմամբ:

2. Բանկային հաշիվ

- 2.1. Պայմանները տարածվում են Բանկում՝ Հաճախորդի բոլոր բանկային հաշիվների վրա՝ անկախ արժույթից և տեսակից:
- 2.2. Բանկը Հաճախորդի համար բացում է բանկային հաշիվ՝ Բանկի սահմանած ձևանմուշով Հաճախորդի Բանկ ներկայացրած հայտի (հայտ-պայմանագրի) հիման վրա:

2.3. Եթե Հաճախորդի համար Բանկի կողմից հեռահար եղանակով բացվել է սահմանափակ հասանելիությամբ բանկային հաշիվ, այդ հաշվի հասանելիությունը մնում է սահմանափակ, քանի դեռ Հաճախորդը չի անցել ՀՀ օրենսդրությամբ և Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված պահանջներին համապատասխան ամբողջական նույնականացում: Ընդ որում, սահմանափակ հասանելիությամբ բանկային հաշվով Հաճախորդը կարող է կատարել հետևյալ սահմանափակ գործառնությունների տեսակները և օգտվել հետևյալ սահմանափակ ծառայություններից.

- 2.3.1. Փոխանցումներ Հաճախորդի հաշիվների միջև,
- 2.3.2. Ներբանկային փոխանցումներ՝ մեկ փոխանցման համար առավելագույնը 400,000 (չորս հարյուր հազար) ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ,
- 2.3.3. Արտարժույթի փոխանակում,
- 2.3.4. Կոմունալ վճարումներ,
- 2.3.5. Պետբյուջե փոխանցումներ,
- 2.3.6. ՃՈ տուգանքների վճարում,
- 2.3.7. Ինտերնետ/ մոբայլ-բանկինգ համակարգում հասանելի հայտեր:

2.4. Հաճախորդի կողմից ՀՀ օրենսդրությամբ և Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված պահանջներին համապատասխան ամբողջական նույնականացում անցնելուց հետո Բանկը Հաճախորդի համար բացում է լիարժեք հաշիվ, իսկ նախքան ամբողջական նույնականացում անցնելը Հաճախորդի համար սահմանափակ հասանելիությամբ հաշիվ բացված լինելու դեպքում փոխում է սահմանափակ հասանելիությամբ հաշվի տեսակը՝ այն դարձնելով լիարժեք բանկային հաշիվ: Ընդ որում, Հաճախորդի համար լիարժեք բանկային հաշիվ բացվելու/սահմանափակ հասանելիությամբ բանկային հաշիվը լիարժեք բանկային հաշվի վերածվելու պահից Բանկը վերացնում է սահմանափակ հասանելիությամբ բանկային հաշվի նկատմամբ կիրառվող սահմանափակումները, և Հաճախորդն իրավունք է ստանում իր հայեցողությամբ ազատորեն տնօրինելու իր բանկային հաշվում առկա միջոցները՝ բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ և Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված դեպքերի:

2.5. Ընթացիկ հաշիվը բացվում է ՀՀ դրամով, ԱՄՆ դոլարով, եվրոյով, ՌԴ ռուբլով, շվեյցարական ֆրանկով, անգլիական ֆունտ ստերլինգով, կանադական դոլարով, ճապոնական իենով, ավստրալիական դոլարով, ԱՄԷ դիրհամով, անկանխիկ ոսկով (999.9 հարգի), ինչպես նաև Բանկի կողմից գնանշվող այլ արժույթով: Խնայողական հաշիվը բացվում է ՀՀ դրամով, ԱՄՆ դոլարով, եվրոյով, ՌԴ ռուբլով:

2.6. Մինչև 14 տարեկան անչափահաս անձի անունով բանկային հաշիվը բացվում և տնօրինվում է անչափահաս անձի օրինական ներկայացուցիչների կողմից, իսկ անչափահաս անձի 14 տարին լրանալուց հետո օրինական ներկայացուցչի գրավոր համաձայնությամբ հաշիվը կարող է տնօրինվել անչափահաս անձի կողմից ինքնուրույն:

Տասնչորսից մինչև տասնութ տարեկան անչափահաս անձը օրենքով նախատեսված դեպքերում և/կամ օրինական ներկայացուցչի գրավոր համաձայնությամբ՝ կարող է Բանկում ինքնուրույն բացել բանկային հաշիվներ և ինքնուրույն տնօրինել դրանցում առկա միջոցները:

2.7. Հաճախորդի՝ Բանկում ունեցած հաշիվներին առկա միջոցները տնօրինելու Հաճախորդի իրավունքը չի կարող սահմանափակվել, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվում առկա միջոցների նկատմամբ սահմանափակում կիրառվելու (արգելադրվելու), հաշվով գործառնությունները դադարեցվելու դեպքում, ինչպես նաև պայմանագրային հարաբերություններ սահմանող փաստաթղթերով, ՀՀ օրենսդրությամբ և/կամ Պայմաններով նախատեսված այլ դեպքերում:

2.8. Բանկն իրավունք ունի իր հայեցողությամբ կասեցնել Հաճախորդի հաշվի և/կամ դրան մուտքագրված գումարի՝ Հաճախորդի կողմից տնօրինման հնարավորությունը, ինչպես նաև մերժել փոխանցված գումարի մուտքագրումը Հաճախորդի հաշվին և/կամ առանց Հաճախորդի լրացուցիչ հանձնարարության հետ փոխանցել այդ գումարը

- փոխանցող կողմին (այդ թվում էլ քաղաքացիական պայմանագրերի հաշվից)՝ գանձելով Սակագներով սահմանված միջնորդավճարը, եթե.
- 2.8.1. Հաճախորդի հաշվին փոխանցված կամ մուտքագրված գումարի հետ կապված Բանկն ունի տեղեկատվություն կամ կասկածներ՝ զեղծարար գործարք կամ գործարքների շղթայի մաս լինելու վերաբերյալ, այդ թվում միջազգային վճարային համակարգերից ստացված զեղծարարության հաշվետվություններում խնդրահարույց գործարքը նույնականացնող տվյալների առկայության դեպքում,
 - 2.8.2. Բանկը գումարը փոխանցող բանկից ստանում է տեղեկատվություն և գրավոր պահանջ՝ փոխանցման գործարքը որպես զեղծարար որակելու և Հաճախորդին փոխանցված գումարը հետ վերադարձնելու մասին,
 - 2.8.3. Փոխանցումը կապված է կրիպտոարժույթով գործարքի հետ, և/կամ գործարքի կողմ է կրիպտոարժույթի հետ կապված գործունեություն իրականացնող անձ:
- 2.9. Եթե այլ բան նախատեսված չէ ՀՀ օրենսդրությամբ, Պայմաններով կամ Կողմերի համաձայնությամբ, Հաճախորդի հաշվին բավարար դրամական միջոցների առկայության դեպքում այդ միջոցները դուրս են գրվում հաշվից՝ Հաճախորդի հանձնարարականները Բանկ մուտք լինելու հաջորդականությամբ (օրացուցային հաջորդականություն), որն առանձնանում է՝ ըստ հանձնարարականների ստացման յուրաքանչյուր եղանակի (յուրաքանչյուր հեռահար սպասարկման համակարգի համար՝ առանձին, և Բանկի տարածքում՝ առանձին): Ընդ որում՝ նշված հաջորդականությունը Բանկի կողմից կարող է փոխվել՝ կախված Բանկի գործառնական համակարգերի տեխնիկաձրագրային հնարավորություններից և Բանկի կողմից սահմանված՝ ներքին հաստատումների համակարգից, իսկ խմբային կամ միաժամանակ ներկայացված հանձնարարականների կատարման հաջորդականությունը Բանկը որոշում է ինքնուրույն, եթե առկա չէ Կողմերի համաձայնությունը՝ որևէ հանձնարարականի առաջնահերթ կատարման վերաբերյալ:
- 2.10. Բանկն ընդունում է Հաճախորդի կողմից ներկայացված վճարման հանձնարարականը Բանկի կողմից սահմանված գործառնական ժամերի ընթացքում:
- 2.11. Հաճախորդի հայտերով, այդ թվում՝ հեռահար կապի միջոցներով ստացված հայտերով՝ արտարժույթի, անկանխիկ ոսկու առքուվաճառքի գործառնությունները, անկախ հայտի ստացման պահից, իրականացվում են Բանկի կողմից գործարքի փաստացի կատարման պահի դրությամբ Բանկի սահմանած փոխարժեքներով և կարգով: Աշխատանքային ժամերից դուրս, ինչպես նաև ոչ աշխատանքային օրերին ստացված արտարժույթի փոխանակման, անկանխիկ ոսկու առքուվաճառքի հայտերը Բանկի կողմից կարող են մերժվել:
- 2.12. Հաճախորդը պարտավոր է արտարժույթի փոխանակման համար Բանկի տարածքում գործարքի մեծության (ծավալի) և փոխարժեքի համաձայնեցման պահից նույն աշխատանքային օրվա ընթացքում կատարել համապատասխան գործարքը: Բանկն իրավունք ունի միակողմանիորեն հրաժարվել արտարժույթի փոխանակման գործարքները Հաճախորդի հետ նախապես համաձայնեցված պայմաններով կատարելուց, եթե Հաճախորդը չի կատարում գործարքը նույն աշխատանքային օրվա ընթացքում կամ խախտում է համաձայնեցված գործարքի պայմաններից (գործարքի մեծություն (ծավալ) և փոխարժեք) որևէ մեկը: Բանկն իրավունք ունի գանձել տույժ Հաճախորդի հաշիվներից գործարքի մեծության (ծավալի) 2 (երկու) տոկոսի չափով, եթե Հաճախորդը հրաժարվում է կատարել գործարքը նույն աշխատանքային օրվա ընթացքում կամ խախտում է համաձայնեցված գործարքի պայմաններից (գործարքի մեծություն (ծավալ) և փոխարժեք) որևէ մեկը: Վճարման ենթակա գումարը գանձվում է Հաճախորդի այն հաշվից, որով ձևավորվել է գանձման ենթակա պարտավորության գումարը, իսկ եթե այդ հաշվին բավարար գումար առկա չէ, ապա գանձումը կատարվում է Հաճախորդի՝ Բանկում ունեցած այլ հաշիվներից՝ գործարքը կատարելով տվյալ պահին Բանկի կողմից սահմանված փոխարժեքով:
- 2.13. Հաճախորդի կողմից Բանկ ներկայացված վճարման հանձնարարականով փոխանցումը Բանկի կողմից կատարվում է համաձայն Սակագների:
- 2.14. Վճարման հանձնարարականը Հաճախորդը պետք է Բանկ ներկայացնի հետևյալ լեզվով.

- 2.14.1. ՀՀ տարածքում լոկալ վճարահաշվարկային համակարգով կատարվող փոխանցումների դեպքում՝ հայերեն՝ ըստ անհրաժեշտության նաև օտար լեզվով, կամ Կողմերի համար ընդունելի այլ տարբերակով,
- 2.14.2. միջազգային փոխանցումների դեպքում՝ անգլերեն, բացառությամբ ՌԴ ռուբլով փոխանցումների, որոնց դեպքում՝ ներկայացվում է ռուսերեն:
- 2.15. Վճարման հանձնարարականում նշված կատարման կամ վճարման օրվանից հետո հինգերորդ աշխատանքային օրվա ավարտի պահին Բանկի կողմից չակցեպտավորված վճարման հանձնարարականը չեղյալ է համարվում:
- 2.16. Բանկային հաշվին կանխիկ միջոցները մուտքագրվում են գումարի ներկայացման պահին, իսկ անկանխիկ միջոցները՝ թղթակից բանկից հավաստիացնող փաստաթղթերի առկայության դեպքում:
- 2.17. Հաճախորդի կողմից ներկայացված հայտի հիման վրա Բանկը Հաճախորդին տրամադրում է կանխիկ միջոցներ համաձայն Սակագների:
- 2.18. Բանկը կատարում է Հաճախորդի՝ հաշվով գործարք կատարելու հանձնարարականը, եթե Հաճախորդի հաշիվ(ներ)ին առկա է բավարար գումար գործարքն իրականացնելու համար, և այդ գումարը ծանրաբեռնված չէ այլ պարտավորություններով:
- 2.19. Այլ բանկերից վճարման հանձնարարականներով գումարների փոխանցման և հաշիվների համալրման դեպքում, գումարի կրեդիտագրման վերաբերյալ Հաճախորդին տեղեկացումը իրականացվում է քաղվածքի տրամադրման միջոցով՝ դրանց ստացման համար հաղորդակցման նախընտրած եղանակով և պարբերականությամբ:
- 2.20. Եթե այլ բանկից ստացված վճարման հանձնարարականում Հաճախորդի հաշիվը թերի է լրացված, սակայն Հաճախորդի մյուս տվյալները և մասնավորապես՝ Հաճախորդի կողքը (հաշվեհամարի մաս կազմող՝ նույնականացման կողքը) ճիշտ են (համընկնում են), և եթե Հաճախորդը փոխանցման գումարի արժույթով Բանկում ունի միայն մեկ հաշիվ, Բանկն իրավունք ունի փոխանցման գումարը մուտքագրել Հաճախորդի այդ հաշվին:
- 2.21. Բանկը պատասխանատվություն չի կրում.
- 2.21.1. Հաճախորդի կրած այն ծախսերի, կորուստների և վնասների համար, որոնք առաջացել են Հաճախորդի հաշվին բավարար միջոց չլինելու պատճառով Հաճախորդի հանձնարարականը չկատարելու արդյունքում,
- 2.21.2. Հաճախորդի կրած այն ծախսերի, կորուստների և վնասների համար, որոնք առաջացել են Հաճախորդի կողմից տրված սխալ, երկիմաստ և ոչ հստակ հանձնարարականի կատարման արդյունքում,
- 2.21.3. Հաճախորդի կողմից համապատասխան հանձնարարականի հիման վրա փոխանցվող գումարի կապակցությամբ՝ շահառուի Բանկի կամ միջնորդ Բանկի կողմից լրացուցիչ տեղեկատվություն պահանջելու կամ փոխանցումը կասեցնելու, գումարները սառեցնելու կամ դրանք չփոխանցելու և դրա հետևանքով առաջացած Հաճախորդի ծախսերի, կորուստների և վնասների համար:
- 2.22. Հաճախորդը կարող է չեղարկել Բանկին տրված վճարման հանձնարարականը համաձայն Սակագների: Եթե փոխանցված միջոցներն արդեն ելքագրվել են Բանկից, ապա Բանկը պատասխանատվություն չի կրում գումարների վերադարձման համար:
- 2.23. Բանկն իրավունք ունի առանց Հաճախորդի լրացուցիչ հանձնարարության՝ Հաճախորդի՝ Բանկում ունեցած հաշիվներից, այդ թվում՝ արտարժույթային հաշիվներից առաջնահերթ՝ Բանկի կողմից սահմանված հերթականությամբ գանձել Հաճախորդի՝ Բանկի նկատմամբ ունեցած պարտավորության գումարները, ներառյալ՝ Սակագներով նախատեսված միջնորդավճարները, ինչպես նաև Հաճախորդի հանձնարարականների կատարման հետ կապված՝ Բանկի կրած ծախսերի գումարները: Ընդ որում, եթե Հաճախորդի ՀՀ դրամով ընթացիկ հաշվին առկա չէ բավարար գումար առկա պարտավորությունը մարելու համար, գումարը նախ գանձվում է Բանկում ունեցած Հաճախորդի ընթացիկ կամ խնայողական հաշիվներից (այդ թվում՝ այլ արժույթով), իսկ դրանցում միջոցների բացակայության դեպքում՝ Հաճախորդի՝ այլ քարտային հաշիվներից (այդ թվում այլ արժույթով):

- 2.24. Բանկը կարող է առանց Հաճախորդի լրացուցիչ հանձնարարության էլքագրել Հաճախորդի բանկային հաշվում եղած միջոցները՝ Հաճախորդի կնքած պայմանագրերի կամ դատարանի վճռի հիման վրա, ինչպես նաև օրենքով և/կամ Պայմաններով սահմանված դեպքերում:
- 2.25. Հաճախորդը համաձայնում է, որ Բանկը կարող է առանց իր լրացուցիչ հանձնարարության էլքագրել Բանկի կողմից, այդ թվում՝ Բանկի կամ Բանկի հետ համագործակցող կազմակերպության սարքավորման միջոցով, ծրագրային ավտոմատացված լուծումներով, Հաճախորդի հաշվին սխալ կամ սխալմամբ մուտքագրված միջոցները, եթե այդ մուտքագրումը ծրագրային, տեխնիկական խափանման, Բանկի աշխատակցի կողմից թույլ տրված սխալի, վրիպակի արդյունք է:
- 2.26. Բանկը իրավունք ունի առանց Հաճախորդին նախապես ծանուցելու, Հաճախորդի՝ Բանկում ունեցած հաշիվներից դուրս գրել բոլոր հարկերը, եթե նման պահանջ սահմանված է ՀՀ օրենսդրությամբ:
- 2.27. Սակագներով սահմանված լինելու դեպքում Հաճախորդի՝ Բանկում ունեցած հաշիվների մնացորդների դիմաց հաշվեգրվում են տոկոսներ: Հաշվարկված տոկոսագումարները վճարվում են ՀՀ դրամով կամ բանկային հաշվի արժույթով՝ ըստ Հաճախորդի ցանկության: Արտարժույթով հաշիվների մնացորդների դիմաց տոկոսագումարը ՀՀ դրամով ստանալու Հաճախորդի ցանկության դեպքում տոկոսագումարի փոխարկումը ՀՀ դրամի կատարվում է վճարման օրվա դրությամբ արտարժույթային շուկայում ձևավորված միջին փոխարժեքով:
- 2.28. Խնայողական հաշվի մնացորդի դիմաց տոկոսագումարները հաշվարկվում են օրական կտրվածքով, և հաշվարկված տոկոսագումարները վճարվում են օրացուցային տարվա յուրաքանչյուր ամսվա վերջում:
- 2.29. Ոսկով առարկայագուրկ մետաղական հաշվում հաշվառվում է Հաճախորդի անկանխիկ (ոչ նյութական) ոսկին, որի համար նշվում է միայն ոսկու հարգը և կշիռը, և չեն նշվում այլ անհատական տվյալները: Նման հաշիվը բացվում է միայն 999.9 հարգով և հաշվում հաշվառվող անկանխիկ ոսկու հաշվառումն իրականացվում է հաշվեկշռային արժեքով՝ ՀՀ դրամով՝ ՀՀ կենտրոնական բանկի կողմից հայտարարված ոսկու հաշվարկային փոխարժեքով, և կշռային արտահայտությամբ՝ արտահայտված գրամներով՝ 0.01 գրամ ճշտությամբ:
- 2.30. Ոսկով առարկայագուրկ մետաղական հաշվի սպասարկումը ներառում է հետևյալ գործառնությունները՝
- 2.30.1. Հաշվին անկանխիկ (ոչ նյութական ձևով) ոսկու մուտքագրում՝ Բանկի կողմից սահմանված գնանշման համաձայն Բանկից ոսկի գնելով կամ Հաճախորդի այլ կամ երրորդ անձանց առարկայագուրկ մետաղական հաշվից անկանխիկ փոխանցման միջոցով,
 - 2.30.2. հաշվից անկանխիկ (ոչ նյութական ձևով) ոսկու էլքագրում՝ Բանկի կողմից սահմանված գնանշման համաձայն Բանկին ոսկի վաճառելով կամ Հաճախորդի այլ կամ երրորդ անձանց առարկայագուրկ մետաղական հաշվին անկանխիկ փոխանցման միջոցով,
 - 2.30.3. ոսկու անկանխիկ առք և վաճառք Հաճախորդի՝ գործարքի էական պայմանները (գինը, կատարման ժամկետը և կշիռը) պարունակող հայտի հիման վրա,
 - 2.30.4. անակցեպտ զանձումներ Բանկի կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ երրորդ անձանց նկատմամբ Հաճախորդի պարտավորությունների կատարման համար:
- 2.31. Ոսկով առարկայագուրկ մետաղական հաշվի սպասարկմամբ Բանկը չի իրականացնում ոսկու նկատմամբ սեփականության իրավունքի գրանցում կամ ոսկու պահառություն:
- 2.32. Բանկը տրամադրում է քաղվածք՝ ՀՀ օրենսդրությամբ և/կամ Հաճախորդի հետ համաձայնեցված պարբերականությամբ և եղանակով: Քաղվածք կարող է չտրամադրվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում:
- 2.33. Բանկը պարտավոր է հնգօրյա ժամկետում Հաճախորդի պահանջով վերջինիս տրամադրել բանկային հաշվի քաղվածք՝ գանձելով Սակագներով՝ քաղվածքի տրամադրման համար սահմանված վճարը:
- 2.34. Քաղվածքը համարվում է Հաճախորդի կողմից ընդունված, եթե քաղվածքի ամսաթվից 30 (երեսուն) օրվա ընթացքում Հաճախորդը Բանկին չի ներկայացնում առարկություններ քաղվածքի վերաբերյալ: Սահմանված ժամանակահատվածի ընթացքում կամ դրանից հետո Հաճախորդի կողմից Բանկին գրավոր ձևով ներկայացված

առարկությունները լուծվում են ՀՀ օրենսդրությամբ և/կամ Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված կարգով:

- 2.35. Հաճախորդի համար Բանկում առաջին անգամ հաշիվ բացելիս Բանկը Հաճախորդին տրամադրում է Ավանդների հատուցման երաշխավորման պայմանների և կարգի մասին ծանուցումը, որը կիրառելի է նաև Հաճախորդի համար Բանկում հետագայում բացվող բանկային և ավանդային հաշիվների համար: Ընդ որում յուրաքանչյուր անգամ հաշիվ բացելիս Բանկը Հաճախորդին կրկին ծանոթացնում է նշված ծանուցմանը: Բանկը Հաճախորդին ծանուցում է ավանդների հատուցման երաշխավորման պայմաններում և կարգում տեղի ունեցած փոփոխությունների մասին:
- 2.36. Համատեղ հաշվի³ տնօրինման կարգը սահմանվում է հաշվետերերի համատեղ համաձայնությամբ՝ Բանկի կողմից սահմանված ձևով Բանկ ներկայացվող Ստորագրությունների նմուշների քարտում և վերջինիս մեջ կատարված հետագա փոփոխությունների միջոցով, և դա կարող է լինել հետևյալ տարբերակներից մեկը.
- 2.36.1. համատեղ հաշիվը տնօրինում են հաշվետեր անձանցից յուրաքանչյուրը առանձին և առանց որևէ սահմանափակման:
- 2.36.2. համատեղ հաշիվը տնօրինում են բոլոր հաշվետերերը միասին՝ ընդհանուր համաձայնությամբ, և այս դեպքում բոլոր հաշվետերերի համաձայնությունը պարտադիր է համատեղ հաշվի հետ կապված ցանկացած գործառնության/գործողության համար:
- Մույն կետում նշված՝ հաշվի տնօրինման կարգը գործում է նաև Հաճախորդների կողմից հեռահար սպասարկման եղանակով հաշվով գործառնություններ կատարելու ժամանակ: Ընդ որում՝ համատեղ հաշվի հաշվետերերը կարող են հաշիվը տնօրինել հեռահար սպասարկման համակարգի միջոցով, եթե ընտրել են հաշիվը հաշվետերերի կողմից առանձին-առանձին և առանց որևէ սահմանափակման տնօրինելու կարգը:
- 2.37. Համատեղ հաշվի հաշվետերերից մեկի մահվան դեպքում հաշվին առկա միջոցները համարվում են հաշվետերերի համատեղ սեփականությունը՝ հավասար մասնաբաժնով: Հաշվետերերից մեկի մահվան մասին պատշաճ ծանուցումը Բանկի կողմից ստանալու պահից առավելագույնը 1 աշխատանքային օրվա ընթացքում և մինչև այդ հաշվետիրոջ իրավահաջորդի կամ այլ օրինական ներկայացուցչի կողմից գործառնություններ կատարելու համար պատշաճ լիազորությունների ձեռքբերումը և ձևակերպումը, Բանկը սահմանափակում է հաշվին առկա միջոցների 50%-ի օգտագործումը, ընդ որում հիմք է ընդունվում սահմանափակումը ձևակերպելու պահին հաշվին առկա գումարը: Այս դեպքում մյուս հաշվետերը կարող է տնօրինել հաշվին առկա միջոցների՝ սահմանափակումներից ազատ մասը:
- 2.38. Համատեղ հաշիվ ունեցող Հաճախորդների հաշվի տնօրինման համար ընտրված կարգը գործում է նաև վերջիններիս կողմից Բանկ ներկայացված՝ համատեղ հաշվով գործառնության կատարման հանձնարարականը Բանկի կողմից սահմանված կարգով և ժամկետում չեղյալացնելու, համատեղ հաշիվը փակելու համար, ընդ որում՝ եթե ընտրվել է հաշիվը հաշվետերերի կողմից առանձին-առանձին և առանց որևէ սահմանափակման տնօրինելու կարգը, ապա հանձնարարականի չեղյալացում կարող է կատարել այն հաշվետերը, որը ներկայացրել է այդ հանձնարարականը, իսկ հաշիվը կարող է փակվել այն հաշվետիրոջ/հաշվետերերի կողմից, որը/որոնք ներկայացրել է/են հաշվի բացման հայտը:
- 2.39. Համատեղ հաշվի հաշվետերերից յուրաքանչյուրը, անկախ վերջիններիս կողմից հաշվի տնօրինման համար ընտրված կարգից, կարող է այլ անձի տրամադրել լիազորագիր՝ իր անունից Բանկում հանդես գալու համար, ինչպես նաև վերացնել տրված լիազորագիրը: Համատեղ հաշվի հաշվետիրոջ լիազորված անձի համար նույնպես գործում է հաշվետերերի կողմից ընտրված հաշվի տնօրինման կարգը:

³ Բանկում համատեղ հաշվի բացման ծառայությունը, այդ թվում գործող հաշվի տեսակի փոփոխությունը համատեղ հաշվի, գործում է մինչև 2021թ. հունիսի 30-ը, իսկ մինչ այդ ամսաթիվը Բանկում բացված համատեղ հաշիվները շարունակում են սպասարկվել Պայմանների համաձայն:

- 2.40. Համատեղ հաշիվ ունեցող Հաճախորդները կարող են հաշվի տնօրինման համար ընտրված կարգով, համատեղ հաշվի միջոցներով Բանկում ներդնել ավանդ՝ հաշվետերերից մեկի անունով, և այդ ավանդը տնօրինում է այդ հաշվետերը՝ առանձին:
- 2.41. Անկախ համատեղ հաշվի տնօրինման ընտրված եղանակից՝ Բանկն իրավասու է համատեղ հաշվից գանձել այդ հաշիվը տնօրինող Հաճախորդներից յուրաքանչյուրի՝ Բանկի նկատմամբ ունեցած պարտավորությունները, ներառյալ Բանկին վճարման ենթակա միջնորդավճարները:

3. **Հեռահար եղանակով սպասարկում**

- 3.1. Բանկը Հաճախորդին տրամադրում է/ հասանելի է դարձնում համապատասխան հեռահար սպասարկման համակարգը՝ Բանկի սահմանած ձևանմուշով Հաճախորդի Բանկ ներկայացրած հայտի (հայտ-պայմանագրի) հիման վրա: Պայմանների իմաստով հեռահար սպասարկման համակարգ են համարվում հեռախոս-քանկ և ինտերնետ/մոբայլ բանկինգ ծառայությունները: Բացի հեռահար սպասարկման համակարգերից, Բանկը ծառայություններ է տրամադրում նաև հեռահար հաղորդակցման այլ միջոցներով, և այդ ծառայությունների շրջանակը, դրանց համար կիրառելի հեռահար հաղորդակցման միջոցները և Հաճախորդի նույնականացման եղանակն ու պահանջները սահմանվում են Բանկի ներքին իրավական ակտերով:
- 3.2. Բանկի կողմից հրապարակայնորեն հասանելի դարձրած՝ Պայմաններում չնկարագրված այլ հեռահար ծառայությունների պայմանները Բանկի կողմից սահմանվում և հրապարակվում են առանձին՝ այդ ծառայությունների համար նախատեսված միջավայրում, և նման ծառայությունների պայմանների ակցեպտավորումը Հաճախորդի կողմից կատարվում է այդ ծառայություններից օգտվելու գործողությամբ կամ համապատասխան համակարգում նախատեսված եղանակով այդ պայմանների ընդունմամբ:
- 3.3. Հաճախորդի կողմից Պայմանների համաձայն հեռահար եղանակով ներկայացված՝ բանկային ծառայություններին առնչվող հայտը, հայտ-պայմանագիրը կամ հանձնարարականը հիմք է համարվում Բանկի կողմից հայտը, հայտ-պայմանագիրը կամ հանձնարարականը ընդունվելու և հաստատվելու դեպքում Հաճախորդին ծառայությունը մատուցելու և Մակագներով սահմանված միջնորդավճարը Հաճախորդի հաշվից անակցեպտ կարգով գանձելու համար:
- 3.4. Բանկի կողմից սահմանված նույնականացման կարգի համաձայն որպես Հաճախորդի նույնականացման եղանակ Բանկը կարող է հասանելի դարձնել տեսազանգը, էթե տվյալ ծառայության մատուցման համար նույնականացման սույն տարբերակը Բանկի համար համարվում է ընդունելի:
- 3.5. Հեռահար սպասարկման համակարգի տրամադրման, դրանցում իրականացվող բանկային ծառայությունների և գործառնությունների դիմաց Հաճախորդից գանձվում է վճար՝ համաձայն Մակագների:
- 3.6. Հեռահար սպասարկման յուրաքանչյուր համակարգի համար Բանկը կարող է սահմանել գործառնությունների գումարային, քանակային և այլ սահմանափակումներ:
- 3.7. Հեռահար սպասարկման համակարգով սպասարկման համար Հաճախորդը պետք է ունենա անհրաժեշտ տեխնիկական և ծրագրային ապահովում, որոնք կախված հեռահար սպասարկման համակարգից՝ կարող են տրամադրվել Բանկի կողմից: Հեռահար սպասարկման համակարգի օգտագործման համար անհրաժեշտ համակարգչային և հեռահաղորդակցության սարքավորումների, ինտերնետային կապի ձեռքբերման և վճարման պատասխանատվությունն ու ծախսերը կրում է Հաճախորդը:
- 3.8. Հեռահար սպասարկման համակարգերից յուրաքանչյուրի համար Բանկի կողմից սահմանվում է Հաճախորդի նույնականացման և հավաստագրման կարգ և միջոց: Բանկն իրավունք ունի ցանկացած ժամանակ փոխել, խստացնել կամ մեղմացնել Հաճախորդի նույնականացման կարգը, փոխարինել կամ հետ պահանջել այդ նպատակով Հաճախորդին տրամադրված նույնականացման և հավաստագրման միջոցները:
- 3.9. Հաճախորդը պարտավոր է ապահովել հեռահար սպասարկման համակարգի ծրագրային ապահովման միջոցների, Հաճախորդի նույնականացման և հավաստագրման միջոցների անվտանգ պահպանումը, չտրամադրել և հայտնի չդարձնել դրանք երրորդ անձանց: Նշված միջոցների կորստի, երրորդ անձանց հայտնի

դառնալու հետևանքով Հաճախորդի, Բանկի և/կամ երրորդ անձանց կրած վնասների և կորուստների համար պատասխանատվությունը կրում է Հաճախորդը:

- 3.10. Հաճախորդը պարտավոր է անհապաղ տեղեկացնել Բանկին ծրագրային ապահովման միջոցների, Հաճախորդի նույնականացման և հավաստագրման միջոցների կորստի, երրորդ անձանց հայտնի դառնալու կամ նման վտանգի առկայության դեպքերի մասին:
- 3.11. Բանկն իրավունք ունի միակողմանի կասեցնել հեռահար սպասարկման համակարգի օգտագործման հնարավորությունը Հաճախորդի համար, եթե ունի կասկածներ հեռահար սպասարկման համակարգի անօրինական օգտագործման, անվտանգության պահանջների խախտման, զեղծարարության վտանգի առկայության վերաբերյալ:
- 3.12. Հեռահար սպասարկման համակարգով Հաճախորդին սպասարկման ժամերը սահմանվում են Բանկի կողմից և հրապարակվում են համապատասխան համակարգում կամ Բանկի պաշտոնական ինտերնետային կայքում:
- 3.13. Հաճախորդի կողմից հեռահար սպասարկման համակարգով Բանկ ներկայացված հանձնարարականը/հայտը Բանկի կողմից կատարվում է տվյալ հեռահար սպասարկման համակարգի համար Բանկի կողմից սահմանված կարգով Հաճախորդին նույնականացնելուց հետո:
- 3.14. Հաճախորդը պատասխանատու է հեռահար սպասարկման համակարգի միջոցով իր կողմից Բանկ ներկայացված հանձնարարականի/հայտի, տեղեկատվության և այլ փաստաթղթերի ճշտության և պատշաճ լինելու համար:
- 3.15. Հաճախորդի կողմից հեռահար սպասարկման համակարգով Բանկ ներկայացված հանձնարարականը/հայտը Բանկի կողմից կարող է մերժվել կամ չկատարվել.
 - 3.15.1. եթե Հաճախորդը չի նույնականացվում պատշաճ կարգով, կամ Բանկն ունի կասկածներ Հաճախորդի նույնականացման կամ հեռահար սպասարկման համակարգի անօրինական օգտագործման հետ կապված,
 - 3.15.2. եթե հանձնարարականի տեղեկատվությունն ու վավերապայմանները ամբողջական չեն կամ չեն համապատասխանում Բանկի կողմից սահմանված պահանջներին,
 - 3.15.3. Պայմաններով, Սակագներով կամ Առանձին ծառայության պայմաններով սահմանված այլ դեպքերում:

3.16. Հեռախոս-բանկ ծառայության միջոցով սպասարկում

- 3.16.1. Հեռախոս-բանկ ծառայությունը հեռախոսակապի միջոցով հեռահար սպասարկման համակարգ է, որով Բանկը Հաճախորդի հայտի/հանձնարարականի հիման վրա տրամադրում է ծառայություններ՝ Սակագներով և/կամ Առանձին ծառայության պայմաններով սահմանված սահմանաչափերով և կարգով: Հեռախոս-բանկ ծառայության միջոցով հասանելի ծառայությունների ցանկը⁴ սահմանվում և կարող է միակողմանիորեն փոփոխվել Բանկի կողմից, հասանելի է Բանկի տարածքում և/կամ Բանկի ինտերնետային կայքում:
- 3.16.2. Հեռախոս-բանկ ծառայության միջոցով տրամադրվող ծառայությունների համար Բանկը կարող է պահանջել ծառայության հետ կապված փաստաթղթերի էլեկտրոնային եղանակով փոխանակում Բանկի և Հաճախորդի միջև:
- 3.16.3. Հաճախորդի հեռախոս-բանկի գաղտնաբառի կիրառմամբ՝ Բանկին տրված բանավոր հաստատումը համարվում է հիմք Պայմաններով սահմանված կարգով ծառայությունը մատուցելու կամ գործարքը կատարելու համար, ինչպես նաև իրավահարաբերությունների հաստատման համար:
- 3.16.4. Հաճախորդը պատասխանատու է իր կողմից հեռախոս-բանկի գաղտնաբառի կիրառմամբ Բանկ ներկայացված հայտի/հանձնարարականի կատարման և դրա հետ կապված հնարավոր կորուստների և վնասների համար:

⁴ «Հեռախոս-բանկով ֆիզիկական անձանց տրամադրվող ծառայությունների ցանկ» (11RBD LI 72-01-04), ընդունվել է Բանկի Տնօրինության 25.01.2022թ. թիվ 01/13/22 որոշմամբ: Հղումը՝ <https://ameriabank.am/useful-links>

- 3.16.5. Մինչև 2016թ. հունիսի 1-ը հեռախոս-բանկ ծառայության հայտ-պայմանագիր կնքած Հաճախորդի կողմից հայտ-պայմանագրում հաշվով անկանխիկ գործարքների իրականացման հնարավորություն ընտրած լինելու դեպքում, Հաճախորդը կարող է օգտվել Պայմանների համաձայն՝ հեռախոս-բանկի միջոցով Բանկի կողմից առաջարկվող բոլոր բանկային ծառայություններից: Ընդ որում, Հաճախորդը իր համաձայնությունն է տալիս նշված ծառայությունների տրամադրմանը՝ հեռախոս-բանկի միջոցով դիմելով Բանկ տվյալ ծառայությունը ստանալու համար:
- 3.16.6. Բանկը Հաճախորդին տրամադրում է հեռախոս-բանկ ծառայության գաղտնաբառը՝ Հաճախորդի կողմից նշված հեռախոսահամարին հաղորդագրություն ուղարկելու միջոցով: Գաղտնաբառը կարող է փոփոխվել Հաճախորդի՝ Բանկ ներկայացված գրավոր հայտի հիման վրա՝ Հաճախորդի կողմից նշված հեռախոսահամարին նոր հաղորդագրության ուղարկման միջոցով: Բացի այդ, գաղտնաբառը կարող է վերականգնվել հեռախոսակապով և/կամ այլ նույնականացվող եղանակով՝ Բանկի կողմից սահմանված նույնականացման կարգի համաձայն: Գաղտնաբառը համարվում է գաղտնի տեղեկատվություն, այդ թվում՝ Բանկի աշխատակիցների համար:
- 3.16.7. Հաճախորդն իրավունք չունի հեռախոս-բանկ ծառայության գաղտնաբառը տրամադրել կամ հայտնի դարձնել երրորդ անձանց և պարտավոր է անհապաղ հայտնել Բանկին գաղտնաբառի՝ այլ անձանց հայտնի դառնալու և (կամ) կորստի մասին: Բանկը պատասխանատվություն չի կրում որևէ կորստի, վնասի համար, որն առաջացել է գաղտնաբառը Հաճախորդի կողմից հեռախոսակապի միջոցով Բանկին հայտնելու հիմքով Հաճախորդին ծառայություններ մատուցելու արդյունքում, անկախ նրանից, թե Բանկը տեղյակ է կորստի կամ վնասի հնարավորության մասին, թե՛ ոչ:
- 3.16.8. Հեռախոս-բանկ ծառայության միջոցով սպասարկվելու համար Հաճախորդը Բանկի հետ կապ է հաստատում Բանկի (+374 10) 56 11 11, (+374 12) 56 11 11 հեռախոսահամարներով:
- 3.16.9. Հեռախոս-բանկ ծառայության միջոցով Հաճախորդի հանձնարարականները կատարելու ժամանակ լրացուցիչ հաստատում ստանալու նպատակով Բանկը իրավունք ունի հետադարձ կապ հաստատել Հաճախորդի հետ վերջինիս՝ Բանկում գրանցված հեռախոսահամարներից որևէ մեկով, կամ պահանջել Հաճախորդից գանձը կատարել վերջինիս Բանկում գրանցված հեռախոսահամարից:
- 3.16.10. Հաճախորդի՝ Բանկ ներկայացված համապատասխան գրավոր հայտի հիման վրա՝ Բանկը արգելափակում է հեռախոս-բանկ ծառայությունը, ինչպես նաև հանում է արգելափակումը:
- 3.16.11. Հաճախորդը պարտավոր է հեռախոս-բանկ ծառայության միջոցով արտարժույթի փոխանակման գործարքի մեծության (ծավալի) և փոխարժեքի համաձայնեցման պահից նույն աշխատանքային օրվա ընթացքում կատարել համապատասխան գործարքը:
- 3.16.12. Բանկն իրավունք ունի միակողմանիորեն հրաժարվել արտարժույթի փոխանակման գործարքը Հաճախորդի հետ նախապես համաձայնեցված պայմաններով կատարելուց, եթե Հաճախորդը չի կատարում գործարքը նույն աշխատանքային օրվա ընթացքում կամ խախտում է հեռախոս-բանկ ծառայության միջոցով համաձայնեցված գործարքի պայմաններից (գործարքի մեծություն (ծավալ) և փոխարժեք) որևէ մեկը:
- 3.16.13. Բանկն իրավունք ունի գանձել տույժ Հաճախորդի հաշիվներից արտարժույթի փոխանակման գործարքի մեծության (ծավալի) 2 (երկու) տոկոսի չափով, եթե Հաճախորդը հրաժարվում է կատարել գործարքը նույն աշխատանքային օրվա ընթացքում կամ խախտում է հեռախոս-բանկ ծառայության միջոցով համաձայնեցված գործարքի պայմաններից (գործարքի մեծություն (ծավալ) և փոխարժեք) որևէ մեկը: Վճարման ենթակա գումարը գանձվում է Հաճախորդի այն հաշվից, որով ձևավորվել է գանձման ենթակա պարտավորության գումարը, իսկ եթե այդ հաշվին բավարար գումար առկա չէ, ապա գանձումը կատարվում է Հաճախորդի՝ Բանկում ունեցած այլ հաշիվներից՝ արտարժույթի փոխարկումը կատարելով տվյալ պահին Բանկի կողմից սահմանված փոխարժեքով:

3.16.14. Հեռախոս-բանկ ծառայության միջոցով Հաճախորդի կողմից Բանկին տրված հանձնարարականները Հաճախորդի կողմից ստորագրման ենթակա չեն: Հաճախորդի կողմից հեռախոս-բանկ ծառայության միջոցով հանձնարարականի հաստատումը համարվում է պատշաճ հաստատում: Գործարքների կատարման հիմքերը արտացոլվում են Հաճախորդի հաշվի (հաշիվների) քաղվածքում:

3.17. Ինտերնետ/ մոբայլ-բանկինգ ծառայության միջոցով սպասարկում

3.17.1. Ինտերնետ/մոբայլ-բանկինգ ծառայությունը ինտերնետային զննարկիչի (բրաուզերի) կամ բջջային հավելվածի միջոցով աշխատող հեռահար սպասարկման համակարգ է (այսուհետ՝ Համակարգ):

3.17.2. Պայմանների իմաստով MyAmeria-ն Համակարգի առանձնացված տարբերակ է:

3.17.3. Պայմաններում Համակարգի վերաբերյալ կարգավորումները վերաբերում են ինչպես զննարկիչի (բրաուզերի), այնպես էլ բջջային հավելվածի միջոցով Համակարգի օգտագործմանը, ինչպես նաև Համակարգի բոլոր տարբերակներին, եթե այլ բան սահմանված չէ տվյալ դրույթում:

3.17.4. Համակարգի միջոցով կարող են կատարվել բանկային ծառայությունների և գործառնությունների համար Բանկի կողմից սահմանված վավերապայմաններին համապատասխանող Հաճախորդի հայտերը/հանձնարարականները՝ Սակագներով, Պայմաններով, Առանձին ծառայության պայմաններով, ինչպես նաև Համակարգում սահմանված սահմանաչափերով և կարգով:

3.17.5. Համակարգի միջոցով Հաճախորդի կողմից Բանկին ուղարկված հաղորդագրությունը Բանկն ուսումնասիրում է 2 աշխատանքային օրվա ընթացքում, և եթե այն պարունակում է Բանկի ծառայության հայտ/հանձնարարական, որին համապատասխան տիպային ձև Համակարգում առկա չէ, սպա բոլոր անհրաժեշտ ճշտումները կատարելուց հետո Բանկը համապատասխան հայտը/հանձնարարականը համարում է ընդունված և կատարում է՝ տվյալ ծառայության հայտի/հանձնարարականի կատարման համար Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված կարգով և ժամկետում:

3.17.6. Բանկն իրավասու է առանց Հաճախորդին նախապես ծանուցելու որոշակի բանկային ծառայությունների և գործառնությունների համար սահմանել սահմանափակումներ և/կամ սահմանաչափեր, ներառյալ՝ գործառնությունների կատարման մերժում, որոնց մասին հնարավորության դեպքում Բանկը տեղադրում է տեղեկատվություն Համակարգում:

3.17.7. Համակարգում առկա բանկային ծառայությունների և գործառնությունների որոշ տեսակներ կարող են հասանելի չլինել Համակարգի որևէ տարբերակում, ինչպես նաև Համակարգը բջջային հավելվածի կամ ինտերնետային զննարկիչի միջոցով օգտագործելու դեպքում:

3.17.8. Անվտանգության նկատառումներից ելնելով՝ Բանկը կարող է սահմանափակել Համակարգի հասանելիությունը առանձին երկրներում:

3.17.9. Համակարգի անխափան աշխատանքի և անվտանգության ապահովման նպատակով Բանկը կարող է սահմանել Համակարգի օգտագործման տեխնիկական միջոցների օպերացիոն համակարգ(եր)ի նկատմամբ նվազագույն պահանջներ: Այդ պահանջների կամ օպերացիոն համակարգի՝ դրանց չհամապատասխանելու մասին Հաճախորդը տեղեկանում է Համակարգի ներբեռնման հարթակներում կամ Բանկի ծանուցումներից:

3.17.10. Համակարգից օգտվելու համար Հաճախորդը պետք է կիրառի Համակարգ մուտք գործելու նույնականացման և հավաստագրման միջոցները/տվյալները, որոնք Հաճախորդին տրամադրվում են Բանկի կողմից կամ սահմանվում են Հաճախորդի կողմից՝ իրականացնելով Ինտերնետ/մոբայլ բանկինգ ծառայության ակտիվացման վերաբերյալ Բանկի կողմից Հաճախորդին տրամադրված տեղեկատվության մեջ նշված քայլերը:

3.17.11. Հաճախորդը պատասխանատվություն է կրում Համակարգի շահագործման հետ կապված տեխնիկական, գործառնական և այլ հնարավոր ռիսկերի համար, ինչպես նաև Համակարգ մուտք գործելու նույնականացման և հավաստագրման միջոցների/տվյալների գաղտնի պահպանության համար:

- 3.17.12. Հաճախորդը պարտավոր է ձեռնարկել բոլոր միջոցները՝ Համակարգը, մեկանգամյա օգտագործման գաղտնաբառ գեներացնող սարքը/հավելվածը, Համակարգ մուտք գործելու նույնականացման և հավաստագրման այլ միջոցները/տվյալները, Համակարգի օգտագործման տեխնիկական միջոցները պահպանելու և երրորդ անձանց հասանելի չդարձնելու ուղղությամբ:
- 3.17.13. Հաճախորդը պարտավոր է Համակարգի, մեկանգամյա օգտագործման գաղտնաբառ գեներացնող սարքի/հավելվածի, Համակարգ մուտք գործելու նույնականացման և հավաստագրման այլ միջոցների/տվյալների, Համակարգի օգտագործման տեխնիկական միջոցների կորստի կամ երրորդ անձանց հասանելի լինելու մասին իմանալու դեպքում անհապաղ միջոցներ ձեռնարկել Համակարգի անվտանգությունն ապահովելու ուղղությամբ, այդ թվում՝ Համակարգի արգելափակման նպատակով այդ մասին անհապաղ հայտնել Բանկին:
- 3.17.14. Հաճախորդը Բանկի կողմից հաստատված հայտի ձևը լրացնելու միջոցով սահմանում է Համակարգից օգտվելու համար օգտագործող(ներ) (այսուհետ՝ Օգտագործող)՝ Համակարգ մուտք գործելու համար պայմանական անուն(ներ)ով: Հաճախորդը կարող է սահմանել մեկից ավել Օգտագործող: Ընդ որում՝ MyAmeria համակարգում Հաճախորդը կարող է որպես Օգտագործող սահմանել նաև 3-րդ անձի: MyAmeria համակարգում Օգտագործողներից մեկը պետք է լինի հիմնական օգտագործող, իսկ մյուսները՝ անդամ օգտագործողներ:
- 3.17.15. Օգտագործող(ներ)ի կողմից Համակարգում կատարված ցանկացած գործարք/գործողություն համարվում է կատարված Հաճախորդի անունից՝ առաջացնելով, փոփոխելով կամ դադարեցնելով Հաճախորդի իրավունքներն ու պարտականությունները:
- 3.17.16. Հաճախորդը համապատասխան հայտում Օգտագործողի համար սահմանում է Համակարգից օգտվելու իրավասությունների շրջանակ: Ընդ որում՝ MyAmeria համակարգի դեպքում 3-րդ անձ Օգտագործողը պետք է Բանկ ներկայանա Հաճախորդի հետ միասին՝ անցնելով Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված պահանջներին համապատասխան ամբողջական նույնականացում և իր ստորագրությամբ հաստատելով իրեն տրամադրվող իրավասությունները:
- 3.17.17. Օգտագործող(ներ)ի կողմից Համակարգում կատարված բոլոր գործարքների/գործողությունների և դրանցից բխող բոլոր հնարավոր վնասների և կորուստների համար պատասխանատու է Հաճախորդը, ընդ որում՝ սույն Պայմաններին միանալով և Օգտագործող(ներ) սահմանելով՝ Հաճախորդը հրաժարվում է այդ վնասների և կորուստների հետ կապված Բանկին որևէ պահանջ ներկայացնելուց:
- 3.17.18. MyAmeria համակարգի Օգտագործողի տվյալների խմբագրում, Օգտագործողի կողմից կիրառվող նույնականացման և հավաստագրման միջոցների/տվյալների հետ կապված փոփոխություններ Բանկը կատարում է միայն Օգտագործողի հանձնարարականի հիման վրա:
- 3.17.19. Հաճախորդի հայտի հիման վրա Հաճախորդի՝ Բանկում գրանցված անձնական տվյալների փոփոխության դեպքում Բանկը կատարում է նաև Համակարգում Հաճախորդի հիմնական Օգտագործողի տվյալների փոփոխություն: Իսկ եթե Հաճախորդը ներկայացնում է Համակարգում գրանցված Օգտագործողի անձնական տվյալների փոփոխության հայտ, Բանկը կատարում է տվյալների փոփոխություն միայն Համակարգում:
- 3.17.20. Համակարգում Հաճախորդը հանձնարարականները ստորագրում (վավերացնում) է էլեկտրոնային եղանակով՝ մեկանգամյա օգտագործման գաղտնաբառ մուտքագրելու միջոցով, որը համարժեք է Հաճախորդի ինքնագիր ստորագրությանը և անհրաժեշտ և բավարար պայման է Բանկի համար Հաճախորդի հանձնարարականը պատշաճ վավերացված համարելու համար՝ առաջացնելով Պայմաններով սահմանված իրավունքները և պարտավորությունները:
- 3.17.21. Համակարգում Հաճախորդի հանձնարարականը էլեկտրոնային ստորագրելու (վավերացնելու) համար կիրառվող մեկանգամյա օգտագործման գաղտնաբառը Հաճախորդը գեներացնում է հետևյալ եղանակներից որևէ մեկով.

- 3.17.21.1. Բանկի կողմից վերջինիս տրամադրված մեկանգամյա օգտագործման գաղտնաբառ գեներացնող սարքի կամ բջջային հավելվածի միջոցով, որը Հաճախորդը կարող է ներբեռնել և ակտիվացնել Բանկի կողմից տրամադրված համապատասխան գաղտնաբանալու միջոցով,
- 3.17.21.2. Հաճախորդի տրամադրած բջջային հեռախոսահամարին Համակարգի միջոցով ուղարկվող SMS հաղորդագրությամբ,

3.17.21.3. Հաճախորդի կողմից սահմանված ՓԻՆ (PIN) կոդի մուտքագրման կամ դեմքի/մատնահետքի կենսաչափական (բիոմետրիկ) նույնականացման միջոցով (Face ID, Finger Touch ID):

- 3.17.22. Հաճախորդը իր հանձնարարականի կատարման կարգավիճակի մասին տեղեկանում է Համակարգում հանձնարարականի կարգավիճակի փոփոխության միջոցով:
- 3.17.23. Օգտագործողի կողմից Համակարգով Բանկ ուղարկված հանձնարարականն ընթացքի մեջ գտնվելը դեռևս չի նշանակում, որ այն միանշանակ կատարվել է կամ կկատարվի Բանկի կողմից: Հանձնարարականը համարվում է կատարված միայն այն պահից, երբ Օգտագործողը ստանում է հանձնարարականի կատարման վերաբերյալ հաստատումը՝ Համակարգում Բանկի կողմից հանձնարարականի կարգավիճակը փոխվելու միջոցով:
- 3.17.24. Հաճախորդին նոր մեկանգամյա օգտագործման գաղտնաբառ գեներացնող սարք կամ մեկանգամյա օգտագործման գաղտնաբառ գեներացնող բջջային հավելվածի գաղտնաբանալի տրամադրելու, ինչպես նաև մեկանգամյա օգտագործման գաղտնաբառ գեներացնող սարքի կորստի կամ վնասվելու դեպքում այն փոխարինելու համար գանձվում է վճար՝ Սակագներով սահմանված չափով և կարգով:
- 3.17.25. Օգտագործողը պատասխանատու է Համակարգով Բանկ ուղարկված հանձնարարականի ճշտության և ամբողջականության համար և պետք է ապահովի, որ հանձնարարականն արտահայտի իր իրական վերջնական նպատակը:
- 3.17.26. Բանկը պատասխանատվություն չի կրում.
 - 3.17.26.1. Պայմաններում սահմանված կանոնների և պահանջների, Համակարգից օգտվելու անվտանգության կանոնների խախտումով կատարված գործարքների, Համակարգ մուտք գործելու նույնականացման և հավաստագրման միջոցների՝ երրորդ անձանց տրամադրման կամ հայտնի դառնալու, այդ միջոցների օգտագործմամբ Բանկին փոխանցված և Բանկի կողմից կատարված հանձնարարականների հետևանքով Հաճախորդի կրած կորուստների կամ վնասների համար, անկախ նրանից, թե Բանկը տեղյակ է նման կորստի կամ վնասի հնարավորության մասին, թե՛ ոչ:
 - 3.17.26.2. Հաճախորդի հանձնարարականը/հայտը ճիշտ և պատշաճ ձևակերպված չլինելու, Պայմաններով սահմանված այլ դեպքերում հանձնարարականը/հայտը չկատարելու հետևանքով Հաճախորդի կրած վնասների համար:
- 3.17.27. Բանկն իրավունք ունի Համակարգի օգտագործմանը խոչընդոտող տեխնիկական վթարների կամ Համակարգի ծրագրային ապահովման թարմացման կամ փոխարինման, ինչպես նաև այլ պլանային տեխնիկական աշխատանքների ժամանակ անորոշ ժամկետով միակողմանիորեն և առանց հատուցման դադարեցնել Համակարգով Հաճախորդի սպասարկումը և կասեցնել Համակարգի հասանելիությունը Հաճախորդին: Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում սույն կետում նշված դեպքերում Հաճախորդի կրած վնասների համար:

3.18. QR (ՔՅՈՒԱՐ) կոդով վճարումների ընդունում

- 3.18.1. QR կոդով վճարումները Բանկի MyAmeria համակարգի բջջային հավելվածի (այսուհետ՝ սույն կետում Հավելված) միջոցով Բանկի հետ համագործակցող վաճառակետերում⁵ իրականացվող անկանխիկ վճարումներ են:

⁵ Վաճառակետերի ցանկը ներկայացված է Բանկի պաշտոնական ինտերնետային կայքում՝ <https://ameriabank.am/>:

3.18.2. QR կողով վճարումներ կատարելու համար Հաճախորդը, Հավելվածում բնութայն QR կողով վճարման տեսակը, սքանավորում է վաճառակետի POS տերմինալի կամ ՀԴՄ սարքի էկրանին գեներացված դինամիկ QR կոդը, ինչի արդյունքում Հավելվածում ավտոմատ արտացոլվող վճարման մանրամասները Հաճախորդի կողմից հաստատվելու դեպքում տեղի է ունենում Հաճախորդի համապատասխան հաշվից կամ Բանկի կողմից ֆինանսավորման շրջանակում տրամադրված դրամական միջոցների ավտոմատ փոխանցում վաճառակետի համապատասխան հաշվին:

3.18.3. QR կողով վճարումները հանդիսանում են Հաճախորդի կողմից Բանկին ներկայացվող հաշվով գործարք կատարելու հանձնարարական, և Հաճախորդն իր կողմից կատարված QR կողով վճարումների համար կրում է Պայմաններով սահմանված նույն պատասխանատվությունը, ինչը գործում է հաշվով կատարված գործարքների համար:

3.18.4. QR կողով վճարված գործարքի չեղարկման դեպքում Հաճախորդը պետք է դիմի այն վաճառակետին, որտեղ կատարել է վճարումը: QR կողով վճարված գործարքը չեղարկվելու դեպքում վճարված գումարը վերադարձվում է անկանխիկ եղանակով: Բանկը պատասխանատվություն չի կրում QR կողով վճարված գործարքի չեղարկման դեպքում գումարի վերադարձման համար:

3.18.5. Հավելված մուտք գործելու և QR կողով վճարման համար Հաճախորդի կողմից օգտագործվող մոբայլ սարքը պետք է ունենա ինտերնետ հասանելիություն: Բանկը պատասխանատվություն չի կրում Հաճախորդի առջև QR կողով վճարումների ընթացքը խոչընդոտող՝ բջջային ծառայության օպերատորի կողմից տրամադրվող ինտերնետ հասանելիության դանդաղության, կապի խափանումների և բնդիատումների դեպքում:

3.18.6. Հավելվածի օգտագործման վերաբերյալ բնդիանուր կանոնները սահմանվում են Պայմանների Ինտերնետ/մոբայլ-բանկինգ ծառայության միջոցով սպասարկման բաժնում և կիրառելի են նաև Հավելվածի միջոցով QR կողով վճարումների գործարքների դեպքում:

4. Հաճախորդի վարվելակերպի կանոններ

4.1. Բանկի հետ ցանկացած եղանակով հաղորդակցվելիս Հաճախորդը պարտավոր է.

4.1.1. դրսևորել զուսպ և քաղաքակիրթ պահվածք, հարգալից վերաբերմունք Բանկի աշխատակցի և Բանկի այլ ներկայացուցիչների (այսուհետ բոլորը միասին՝ Բանկի ներկայացուցիչ) և Բանկի հաճախորդների նկատմամբ, խոսել քաղաքավարի, հանգիստ տոնով, չօգտագործել անպարկեշտ արտահայտություններ,

4.1.2. խուսափել Բանկի ներկայացուցչի նկատմամբ խտրական, վիրավորական վերաբերմունքից և այնպիսի վարքագծից, որը կարող է նվաստացնել վերջինիս ինքնասիրությունն ու արժանապատվությունը՝ անկախ ռասայական, ազգային պատկանելությունից, սեռից, տարիքից, արտաքին տեսքից, աշխատանքային փորձից և զբաղեցրած պաշտոնից,

4.1.3. բացառել անհանդուրժող, ագրեսիվ պահվածքը, որը կարող է որևէ կերպ վնաս հասցնել Բանկին, վիրավորել կամ վնասել Բանկի ներկայացուցչին կամ Բանկի հաճախորդներին, խոչընդոտել Բանկի բնականոն աշխատանքը,

4.1.4. գերծ մնալ Բանկի ներկայացուցչին սպառնալուց կամ որևէ կերպ ճնշում գործադրելուց:

4.2. Բնչպես Բանկի հետ հաղորդակցվելիս, այնպես էլ հրապարակային և սոցիալական հարթակներում կարծիք արտահայտելիս Հաճախորդը պարտավոր է խուսափել Բանկի վերաբերյալ զրպարտիչ, ոչ պատշաճ բնույթի, իրականությանը չհամապատասխանող հայտարարություններից, որոնք կարող են որևէ կերպ արատավորել Բանկի բարի համբավը: